

Զեկույց

(նախնական)

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթների, ՀՀ գլխավոր դատախազությունում դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացված բաց մրցույթների և ՀՀ քննչական կոմիտեում ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացված գրավոր քննությունների վերաբերյալ



«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

Երևան, 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....4

1. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ծառայողի և հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթի դիտարկում.....4

1.1. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում անցկացվող մրցույթների հիմքում ընկած ներպետական օրենսդրությունը.....4

1.2. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների թափանցիկությունն ու հրապարակայնությունը.....8

1.3. 2014թ. նոյեմբերի 25-ին հատուկ քննչական ծառայությունում քննչական ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթը.....9

1.4. 2016թ. փետրվարի 1-ին հատուկ քննչական ծառայությունում հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթը.....12

1.5. 2016թ. մարտի 9-ին հատուկ քննչական ծառայությունում հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթը.....14

1.6. Կազմակերպված մրցույթների մասին տեղեկատվության տրամադրման մեթոդում ՀԲԾ-ի կողմից.....14

1.7. Մրցութային հանձնաժողովի կարգավիճակը, անկախությունն ու գործունեությունը..16

1.8. Կազմակերպված մրցույթների մասին տեղեկատվության տրամադրման մեթոդում ՀԲԾ-ի կողմից.....17

1.9. Հատուկ քննչական ծառայության գործողությունների բողոքարկում.....21

1.10. Հատուկ քննչական ծառայության մասին օրենքում անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ.....25

2. ՀՀ գլխավոր դատախազությունում դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացված բաց մրցույթի դիտարկում.....26

2.1. Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթների հիմքում ընկած ներպետական օրենսդրությունը.....26

2.2. Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով 2015թ. հունվարին անցկացված բաց մրցույթը.....30

2.3. Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով 2016թ. հունվարին անցկացված բաց մրցույթը.....33

2.4. ՀՀ գլխավոր դատախազության գործողությունների բողոքարկում.....	37
2.5. ՀՀ դատախազության մասին օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ.....	37
3. ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների մրցույթի դիտարկում.....	39
3.1. ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի ձևավորման հիմքում ընկած ներպետական օրենսդրությունը.....	39
3.2. Քննչական ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով 2015թ. հունիսի 26-ին անցկացված քննությունը և թափանցիկության ու հրապարակայնության խնդիրներ, որակավորման հանձնաժողովի գործունեությունն ու անկախությունը.....	44
3.3. Քննչական ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով 2015թ. հունիսի 26-ին անցկացված քննությունը.....	46
3.4. ՀՀ քննչական կոմիտեի գործողությունների բողոքարկում.....	48
3.5. ՀՀ Քննչական կոմիտեի մասին օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ.....	48
4. Ընդհանուր եզրահանգում մրցութային հանձնաժողովների կազմի և ձևավորման վերաբերյալ.....	49

Ներածություն

«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «ԻԵՄ» իիկ կամ ԻԵՄ), հանրային կառավարման գործընթացների թափանցիկության և պետական իշխանությունների հաշվետվողականության բարձրացումը ճանաչելով որպես առաջնահերթություն, 2014թ. հուլիսից ստանձնել է պետական պաշտոնյաների ընտրության և նշանակման գործընթացի դիտարկման առաքելությունը: «Հանրային վերահսկողություն պետական պաշտոնյաների նկատմամբ» ծրագրի շրջանակներում դիտարկվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում քաղծառայողների բարձրագույն և գլխավոր թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթները, դատավորների, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակը, ինչպես նաև՝ ՀՀ քննչական ծառայությունում (այսուհետ՝ ՀՔԾ) քննիչների թափուր պաշտոնները համալրելու նպատակով անցկացվող որակավորման ստուգման քննությունները և մրցույթները: Սույն զեկույցում կներկայացվեն, մասնավորապես, դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակի, ինչպես նաև ՀՔԾ-ում քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով կազմակերպված մրցույթների դիտարկման արդյունքները:

1. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթները.

2014թ. նոյեմբերի 25-ին, 2015թ. ապրիլի 27-ին և հոկտեմբերի 9-ին, 2016թ. փետրվարի 1-ին և մարտի 9-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում անց են կացվել մրցույթներ՝ համապատասխանաբար քննչական ծառայողների և հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով: «ԻԵՄ» իիկ-ին չի հաջողվել դիտարկել նշված մրցույթներից և ոչ մեկը՝ ՀՔԾ-ի կողմից ստեղծված խոչընդոտների պատճառով:

1.1. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում անցկացվող մրցույթների հիմքում ընկած ներպետական օրենսդրությունը.

Ոլորտը կարգավորող իրավական ակտերն են «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը, «Հատուկ քննչական ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 28.02.2008թ. թիվ 180-Ն որոշումը, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի 2009 թ.ի ապրիլի 18-ի թիվ Լ-5 հրամանով սահմանված «ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոն զբաղեցնելու համար բաց մրցույթի կարգ»-ը, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի 2015թ. մարտի 26-ի թիվ 03-Լ հրամանով հաստատված «Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգ»-ը:

- 1.1.1. «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթի հիման վրա նշանակումներ կատարվում են միայն գլխավոր և առաջատար խմբի պաշտոններում ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի կողմից: Այդ խմբերում թափուր պաշտոն առաջանալու դեպքում մեկ ամսվա ընթացքում ՀՔԾ-ի պետը նշանակում է մրցույթ: Մրցույթն անցկացնելու մասին տրվում է հայտարարություն այն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:
- 1.1.2. Մրցույթն անց է կացնում մրցութային հանձնաժողովը, որը համաձայն «Հատուկ քննչական ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 28.02.2008թ. թիվ 180-Ն որոշման՝ կազմավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից: Մրցութային հանձնաժողովն ունի 7 անդամ, որոնցից 3-ը իրավաբան-գիտնականներ են, իսկ 4-ը՝ պետական ծառայողներ: Մրցութային հանձնաժողովը ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, որին հանձնաժողովի անդամների թվից նշանակում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը: Չի հստակեցվում, թե կոնկրետ որ պետական մարմինն են ներկայացնում մրցութային հանձնաժողովի անդամ հանդիսացող 4 պետական ծառայողները: Այս հանգամանքը հատկապես կարևոր է այն տեսանկյունից, որ օրենքը լայն հնարավորություն է տալիս հայեցողության, որը հաշվի առնելով հայաստանյան իրողությունները՝ հաճախ կարող է չարաշահվել՝ առաջացնելով նաև կոռուպցիոն ռիսկեր: Ուստի այս նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ ենք համարում օրենսդրության որոշակիացում, ինչպես նաև հանձնաժողովների ձևավորման, անդամների առաջադրման, ընտրության և, որ ավելի կարևոր է, դրա անդամների պարբերական փոփոխության հարցերի առավել մանրամասն կարգավորում:
- 1.1.3. Ըստ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող ՀՀ այն քաղաքացին, ով.
- Անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ պահեստազորի սպա է, կամ դիմելու պահին «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերով ազատված է զինվորական ծառայությունից, կամ մինչև 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում է ստացել:
 - Տիրապետում է գրական հայերենին.

- Չունի Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ և/կամ հիվանդություն (ցանկը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից):

1.1.4. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով.

- Դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- Դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից,
- Դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից,
- Գտնվում է քրեական հետապնդման մեջ,
- Ում սահմանային տարիքը գերազանցում է 60 տարեկանը:

1.1.5. Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ կարող է նշանակվել այն անձը, որը մինչև նշանակումը վերջին 2 տարին զբաղեցրել է հատկապես կարևոր գործերով քննիչի պաշտոն կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 4 տարվա ստաժ: Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով քննիչ կարող է նշանակվել այն անձը, որը մինչև նշանակումն ունի դատախազի կամ քննիչի առնվազն 3 տարվա ստաժ:

1.1.6. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում գլխավոր և առաջատար խմբի պաշտոնների համալրման նպատակով մրցույթն անց է կացվում հարցազրույցի ձևով: Հարցազրույցը հայտատուի մասնագիտական պատրաստվածության, գործնական ունակությունների և բարոյական հատկանիշների ստուգումն է, որը կատարվում է այդ նպատակով կազմված հարցաշարի հիման վրա տրված հարցերի միջոցով: Հարցաշարում զետեղված առաջադրանքները բովանդակում են առարկայական հարցադրումներ ստորև թվարկված բնագավառներից՝

- ՀՀ Սահմանադրություն,
- ՀՀ օրենքը «Հատուկ քննչական ծառայության մասին»,
- ՀՀ քրեական օրենսգիրք,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք,
- Քրեագիտություն, քրեաբանություն:

Հարցաշարը կարող է ներառել նաև քաղաքացիական, քաղաքացիադատավարական, քրեակատարողական և այլ լիազորություններից բխող օրենսդրություն:

1.1.7. Հարցազրույցի ընթացքում հանձնաժողովը հավակնորդին ընդհանուր հաշվարկով կարող է տալ առավելագույնը 15 (տասնհինգ) հարց: Յուրաքանչյուր հարցից

հետո հարց տվող հանձնաժողովի անդամը հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելը, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ նշում ճիշտ պատասխանը: Հարցին պատասխանելու համար հավակնորդին, ցանկության դեպքում, տրվում է ողջամիտ ժամանակ՝ պատրաստվելու և մտքերը հավաքելու համար: Հարցազրույցից հետո յուրաքանչյուր մասնակցի համար անց է կացվում քվեարկություն: Հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր հավաքել են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները: Հանձնաժողովը դրական եզրակացություն է տալիս տրված ընդհանուր հարցերից 70 տոկոս և ավելի հարցերին ճիշտ պատասխանած հավակնորդի համար, որը որոշվում է բաց քվեարկության միջոցով՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի կողմից, ինչի մասին կազմվում է արձանագրություն: Մրցույթին մասնակցող հավակնորդներից յուրաքանչյուրի համար հանձնաժողովը կազմում է համապատասխան եզրակացություն՝ դրանում նշելով հետևյալը.

- Հաղթող ճանաչված մասնակիցների ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ այբբենական կարգի, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, անձնագրային տվյալները.
- Հաղթող ճանաչված մասնակիցներից յուրաքանչյուրի հավաքած միավորների քանակը՝ սույն կարգով նախատեսված տոկոսային արտահայտմամբ.
- Հարցազրույցի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից յուրաքանչյուրի վերաբերյալ Հանձնաժողովի քվեարկության արդյունքները:
- Եզրակացությունը պետք է ստորագրեն հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները: Հատուկ կարծիք ունեցող անդամները ստորագրելիս նշում են այդ մասին՝ ստորագրության կողքին գրառելով «հատուկ կարծիքը կցվում է» բառերը: Հանձնաժողովի աշխատանքները համարվում են ավարտված եզրակացությունը տալուց հետո:

1.1.8. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթի անցկացման օրը: Մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո մասնակիցն՝ իր արդյունքների մասով, կամ մրցութային հանձնաժողովի անդամը մեկ ժամվա ընթացքում այդ արդյունքները կարող է գրավոր բողոքարկել հատուկ քննչական ծառայության պետին: Մրցույթի արդյունքների հրապարակումից մեկ ժամ հետո գրավոր բողոքի բացակայության դեպքում համապատասխան մրցութային հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացություն է ներկայացնում հատուկ քննչական ծառայության պետին, որը եզրակացությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին նշանակում է համապատասխան պաշտոնում: Եթե մասնակիցներից ոչ մեկը չի հավաքել մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ ու մրցույթում

հաղթող չի ճանաչվել, ապա անց է կացվում նոր մրցույթ: Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ դիմողները չեն բավարարում սույն օրենքով պաշտոնի անցնելու համար ներկայացվող պահանջներին, կամ դիմողներից ոչ մեկը չի ներկայացել մրցույթին, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անց է կացվում նոր մրցույթ:

1.2. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների թափանցիկությունն ու հրապարակայնությունը.

1.2.1. ՀՀ կառավարության «Հատուկ քննչական ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» 2008թ. փետրվարի 28-ի N 180-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ մրցութային հանձնաժողովի խնդիրն է ապահովել անցկացվող մրցույթների թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Չնայած վերոնշյալ դրույթի բովանդակությանը, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ոչ միայն չի ապահովել քննչական ծառայողների և հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների թափանցիկությունն ու հրապարակայնությունը, այլ հակառակը՝ բոլոր հնարավոր եղանակներով խոչընդոտել է հանրային նման կարևորության գործընթացները հանրային հսկիչների՝ լրագրողների և հասարակական կազմակերպությունների կողմից դիտարկելուն և լուսաբանելուն: «ԻԵՄ» իիկ-ի կողմից ՀՀ ՀՔԾ-ում անցկացվելիք մրցույթները դիտարկելու հնարավորություն ընձեռելու խնդրանքով ներկայացված բոլոր դիմումները մերժվել են: Որպես մերժման հիմք՝ քննչական ծառայությունը ներկայացրել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոն գրադեցնելու համար բաց մրցույթի անցկացման կարգի 59-րդ կետը, ըստ որի՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով մրցույթին կարող են ներկա գտնվել **մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ**, ինչպես նաև՝ **հրավիրված դիտորդներ**: Հղում կատարելով այս դրույթին՝ ՀՔԾ-ն նշել է, որ ԻԵՄ-ը հրավիրված դիտորդ չի հանդիսանում և որ, ընդհանրապես, նրանք դիտորդ հրավիրելու անհրաժեշտություն չեն տեսնում: Սա ուղղակիորեն հակասում է ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 28-ի թիվ 180-Ն որոշմամբ սահմանված ՀՔԾ-ում անցկացվող մրցույթների թափանցիկության և հրապարակայնության ապահովման պահանջին: Հատկանշական է այն, որ չնայած վերոնշյալ դրույթը հրավիրված լինելու նախապայման սահմանում է միայն դիտորդների համար, իսկ լրագրողների առնչությամբ նշվում է, որ մրցույթին կարող են ներկա գտնվել մամուլի և այլ ՋԼՄ ներկայացուցիչներ, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը նաև լրագրողներին է արգելել մասնակցել մրցույթներին և լուսաբանել դրանք: Հատուկ քննչական ծառայությունը, սակայն, չի սահմանափակվել հանրային հսկիչների առջև մրցույթները դիտարկելու և

լուսաբանելու արգելք դնելով այլ նաև հրաժարվել է անցկացված մրցույթի վերաբերյալ որևէ տեղեկատվություն տրամադրելուց:

1.3. 2014թ. նոյեմբերի 25-ին հատուկ քննչական ծառայությունում քննչական ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթը.

1.3.1. 2014թ. նոյեմբերի 19-ին «ԻԵՄ» իհկ-ն դիմել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով 2014թ. նոյեմբերի 25-ին անցկացվելիք բաց մրցույթի նկատմամբ դիտորդական առաքելություն իրականացնելու խնդրանքով: Պատասխան չստանալով՝ «ԻԵՄ» իհկ-ի տարբեր ներկայացուցիչներ նոյեմբերի 24-ի աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում զանգահարել են ՀՀ ՀՔԾ մամուլի քարտուղարին, որը, սակայն, զանգերին չի պատասխանել: Նոյեմբերի 25-ին «ԻԵՄ» իհկ նախագահ Լուսինե Հակոբյանը և ԻԵՄ-ի անդամ Տիգրան Եգորյանը, այդուհանդերձ, գնացել են ՀՔԾ-ի վարչական շենք՝ փորձելով իրացնել դիտորդական առաքելություն իրականացնելու իրենց իրավունքը: Այնտեղ են եղել նաև «Newsline.am» առցանց լրատվամիջոցի լրագրող Արաքս Մամուլյանը և «iLur.am» առցանց լրատվամիջոցի լրագրող Հակոբ Կարապետյանը, որոնք փորձել են լուսաբանել ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթը: Ո՛չ դիտորդներին և ո՛չ էլ լրագրողներին չի թույլատրվել մուտք գործել ՀՔԾ շենք: Այդպիսով՝ դիտորդներին ՀՔԾ-ում չեն թույլատրել կատարել հանրային հսկիչի իրենց դերը և խոչընդոտել են լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը (ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ կետ): ՀՀ ՀՔԾ-ն խախտել է նաև իր իսկ կողմից 2009 թ. ապրիլի 18-ին սահմանված L-5 կարգը (ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոն զբաղեցնելու համար բաց մրցույթի կարգ), որի 57-րդ կետի համաձայն՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով մրցույթին կարող են ներկա գտնվել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև՝ հրավիրված դիտորդներ:

1.3.2. ԻԵՄ-ի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանին առձեռն հանձնվել է չստորագրված փաստաթուղթ՝ նշելով, որ այն ԻԵՄ-ի նոյեմբերի 19-ի դիմումի պատասխանն է: Նույն օրը ԻԵՄ-ի նախագահ Լուսինե Հակոբյանը, լրագրողներ Հակոբ Կարապետյանը և Արաքս Մամուլյանը գրավոր դիմումներ են ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը՝ խնդրելով տրամադրել բաց մրցույթի մրցութային փաստաթղթերը, այդ թվում՝ հավակնորդների ինքնակենսագրությունները, մրցույթի արձանագրությունը և հավակնորդների վերաբերյալ կազմված եզրակացությունները: Նոյեմբերի 28-ի գրությամբ ՀՔԾ-ն

մերժել է տրամադրել պահանջված տեղեկատվությունը՝ պատճառաբանելով, որ դրանք անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանման անհրաժեշտությամբ պայմանավորված, չեն կարող հրապարակվել կամ տրամադրվել երրորդ անձանց:

- 1.3.3. 2014 թ. նոյեմբերի 26-ին, այսինքն՝ մրցույթի հաջորդ օրը միայն «ԻԵՄ» իհկ-ն ստացել է իր՝ նոյեմբերի 19-ի դիմումի պատասխանը, որով մերժվել է նոյեմբերի 25-ի բաց մրցույթին դիտորդություն իրականացնելու վերաբերյալ դիմումը: Մերժման հիմքում դրվել է այն, որ բաց մրցույթի ժամանակ դիտորդություն կարող են իրականացնել միայն հրավիրված դիտորդները, ինչպիսիք «ԻԵՄ» իհկ-ի ներկայացուցիչները չեն հանդիսանում, քանի որ ՀՔԾ-ի կողմից որևէ դիտորդ չի հրավիրվել: Նշվել է նաև, որ կասկածի տակ չի կարող դրվել մրցութային հանձնաժողովի աշխատանքների անաչառությունն ու օբյեկտիվությունը, ուստի դիտորդական առաքելություն հրավիրելու իմաստ և անհրաժեշտություն չկա, ինչի մասին է վկայում նաև ծառայությունում ձևավորված դիտորդներ չհրավիրելու պրակտիկան:
- 1.3.4. 2015 թ. հունվարի 27-ին «ԻԵՄ» իհկ-ն հարցում է ուղարկել ՀՔԾ՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով 2014թ. նոյեմբերի 25-ին անցկացված բաց մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմի վերաբերյալ՝ մանրամասնելով, թե հանձնաժողովի անդամներից յուրաքանչյուրը որ մարմինն է ներկայացնում: Խնդրել ենք նաև տրամադրել թափուր պաշտոնների հավակնորդների ինքնակենսագրությունը, հարցազրույցի հարցաշարերը, յուրաքանչյուր հավակնորդի գնահատման արդյունքները՝ ըստ հանձնաժողովի առանձին անդամների:
- 1.3.5. Փետրվարի 9-ին ստացել ենք պատասխան, որում նշվել է որ հարցազրույցի հարցաշարը տեղադրված է ՀՔԾ-ի պաշտոնական կայքում: Որոնում կատարելով www.investigatory.am կայքում՝ գտանք «Ծրագիր-Հարցաշար» վերտառությամբ մի հղում, որի վրա սեղմելիս բացվում է անընթեռնելի տառատեսակով ինչ-որ տեքստանման բան, ընդ որում՝ փորձեցինք այդ կայքէջ մուտք գործել չորս տարբեր համակարգիչներից, բայց պատկերը նույնն էր /արտատպվածքներն/սրբինշոթերն առկա են/: Գնացինք նաև մեկ այլ՝ «[Հրաման N°56-Լ, 27 08.2008թ](#)» հղմամբ, որը, սակայն, առհասարակ, հասանելի չէր / արտատպվածքներն/սրբինշոթերն առկա են/:
- 1.3.6. Ինչ վերաբերում է մեր հարցման մյուս մասին, ապա ՀՀ ՀՔԾ-ն մերժել է մեր՝ տեղեկություն տրամադրելու խնդրանքը՝ հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետին: ՀՔԾ-ն մրցույթի մասնակիցների ինքնակենսագրությունը դիտարկում է որպես

անձնական կյանքին վերաբերող տեղեկատվություն, որը ենթակա չէ տրամադրման այլ անձանց:

- 1.3.7. Մրցույթի մասնակիցների գնահատման արդյունքները նույնպես չեն տրամադրվել մեզ, քանզի ըստ ՀՔԾ-ի՝ մրցույթի մասնակիցը ոչ թե գնահատվում է, այլ՝ արձանագրվում են միայն նրա ստացած կողմ կամ դեմ ձայները: Քվեարկության արդյունքները, նույնպես, մեզ չեն տրամադրվել ՀՔԾ-ի կողմից:
- 1.3.8. 2015թ. դեկտեմբերի 29-ին «ԻԵՄ» իհկ-ն դիմել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից Հատուկ քննչական ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով 2014 և 2015թթ. անցկացված մրցույթներին մասնակցելու նպատակով դիմող և հաղթող քաղաքացիների թիվը և անուն ազգանունները, ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ՀՔԾ-ի հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով 2015թ. հոկտեմբերի 9-ին անցկացված մրցույթին մասնակցած և հաղթած անձանց թիվը, անուն ազգանունները, ինչպես նաև այդ պաշտոնները նախկինում զբաղեցրած անձանց անուն ազգանունները և տպագիր մամուլի կողմից թողարկված այն համարների բնօրինակները, որոնցում անցկացված մրցույթների մասին տարածվել են մրցույթների վերաբերյալ հայտարարությունները:
- 1.3.9. 20.01.2016թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունը 29.12.2015թ հարցմանը պատասխանել է, որ վերոհիշյալ մրցույթների վերաբերյալ հայցվող տեղեկատվությունն «ամբողջությամբ վերաբերում է անձի անձնական կյանքին և դրանց հրապարակումն անթույլատրելի է՝ պայմանավորված դրանց անձնական կյանքի գաղտնիության սահմանադրական սկզբունքի մեջ ներառվելու հանգամանքով»: Մրցույթի վերաբերյալ մամուլում հրապարակված հայտարարությունների մասով ՀՔԾ-ն հրաժարվել է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Ներկայացվել են միայն տպագիր մամուլի այն համարները, որոնցում հայտարարությունները տպագրվել են: Իսկ այդ համարների բնօրինակները կամ դրանց համապատասխան էջերի պատճենները ԻԵՄ-ին չի տրամադրվել:

1.4. 2016թ. փետրվարի 1-ին հատուկ քննչական ծառայությունում հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթը.

- 1.4.1. 2015թ. դեկտեմբերի 22-ին «ԻԵՄ» իհկ-ն դիմել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ խնդրելով հնարավորություն ընձեռել դիտարկելու 2016թ. փետրվարի 1-ին ՀՔԾ-ի կողմից հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր

պաշտոնների համալրման նպատակով անցկացվելիք մրցույթը: 2016թ. հունվարի 27-ին ստացվել է ՀՔԾ-ի 22.01.2016թ. ամսաթվով մակագրված պատասխանը, որով ՀՔԾ-ն կրկին անգամ մերժել է իր կողմից կազմակերպվող մրցույթը դիտարկելու խնդրանքը: Որպես մերժման հիմք՝ ներկայացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի 2015թ. մարտի 26-ի թիվ 03-Լ հրամանով հաստատված «Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգ»-ի 59-րդ կետը, որի համաձայն՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով մրցույթին կարող են ներկա գտնվել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև՝ հրավիրված դիտորդներ: ՀՔԾ-ն նշել է, որ «ԻԵՄ» իեկ-ն հրավիրված դիտորդ չի հանդիսանում, քանի որ ՀՔԾ-ի կողմից որևէ դիտորդական առաքելություն մրցույթին ներկա գտնվելու համար չի հրավիրվել՝ դրա անհրաժեշտության բացակայության պատճառով: ՀՀ հատուկ քննչական ծառայությունը նաև նշել է, որ թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթներին դիտորդական առաքելություն իրականացնող անձի ներկայությունն ապահովելու համար «անհրաժեշտ է դրանց մասնակցության վավերապայմաններն ու ընթացակարգը սահմանող համապատասխան օրենքի և այլ իրավական ակտի առկայություն: Առանց դրանց միաժամանակյա առկայության, դիտորդական առաքելություն իրականացնող անձի իրավունքի իրացումը չի կարող երաշխավորվել»: ՀՀ ՀՔԾ-ն նաև եզրակացրել է, որ նշված իրավական ակտի բացակայության պայմաններում դիտորդների մասնակցությունը մրցույթին կարող է անիրավաչափորեն հանգեցնել մրցույթի մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի խախտմանը և մրցույթի անցկացման իրավավիճակների խաթարմանը, ինչը կհանգեցնի մրցույթի անվավերության:

- 1.4.2. Այսպիսով՝ ՀՔԾ-ում փաստորեն երկու տարվա ընթացքում գրեթե ոչինչ չի փոխվում այն առումով, որ եթե իրականում ՀՔԾ-ի համապատասխան պաշտոնյաները ցանկանում են իրենց ղեկավարած մարմնի հեղինակությունը բարձրացնել՝ ապահովելով այդ ծառայության ձևավորման թափանցիկությունն ու հրապարակայնությունը, դրանով իսկ ցրելով որևէ կասկած այդ գործընթացի արդարացիության նկատմամբ, ապա եթե նույնիսկ համարենք, որ իսկապես դիտորդության համար անհրաժեշտ է ինչ-որ իրավական ակտ ընդունել, անհասկանալի է թե ինչն է պատճառը, որ այն մինչ օրս չի ընդունվել: Ակնհայտ է, որ պատճառն այլ է և դրա մասին է վկայում առաջին հերթին այն հանգամանքը, որ ԶԼՄ-ներին մրցույթը լուսաբանելու համար ոչ մի իրավական ակտ ընդունելու անհրաժեշտություն չկա (այդպիսի անհրաժեշտության մասին ՀՔԾ պատասխանում չի նշվում), սակայն նրանց ևս չեն թույլատրում դիտարկել մրցույթները: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ իրական շարժառիթներն այլ են,

և դրանք, ցավոք սրտի, միայն բացասական երևույթների մասին են խոսում և կոռուպցիայի զարգացման լայն հնարավորություններ են պարունակում:

Հատուկ քննչական ծառայությունը խախտում է ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մի շարք հոդվածներ, Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի մի շարք դրույթներ, ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայով ձևավորված մի շարք միջազգային չափանիշներ:

- 1.4.3. Չնայած վերոգրյալին, «ԻԵՄ» ինկ-ի դիտորդները 2016թ.փետրվարի 1-ին գնացել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ փորձելով իրացնել հարկային հսկիչի իրենց գործառույթը: Նրանց, սակայն, չի թույլատրվել բարձրանալ մրցութային դահլիճ: Մրցույթի լուսաբանման նպատակով ՀՀ ՀՔԾ է ժամանած եղել նաև «Ա1+» լրատվական կայքի լրագրողը, ում նույնպես արգելվել է հետևել մրցույթի ընթացքին և լուսաբանել հանրային նման կարևորություն ունեցող գործընթացը: Որպես պատճառաբանություն՝ ներկայացվել է այն հանգամանքը, որ մրցույթն արդեն սկսվել է, և լրագրողի ներկայությունը կարող է ընդհատել մրցույթի ընթացքը և խաթարել այն: ՀՀ հատուկ քննչական ծառայության մամուլի քարտուղարը լրագրողին, մասնավորապես, ասել է, որ նա չի կարող լուսաբանել մրցույթի ընթացքը, քանի որ նախապես նման խնդրանքով չի դիմել ՀՔԾ-ին՝ հորդորելով հետագա մրցույթները լուսաբանելու իրավունք ստանալու համար նախապես դիմել և միայն համապատասխան թույլտվություն ստանալուց հետո գալ ՀՔԾ: Փետրվարի 5-ին ԻԵՄ-ը հարցում է ուղարկել ՀՔԾ՝ խնդրելով տրամադրել ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթները լուսաբանելու համար լրագրողների կողմից նախապես դիմելու պարտադիր պայման նախատեսող իրավական ակտի ամբողջական տեքստը: Ի պատասխան հարցման՝ ՀՔԾ-ն նշել է, որ մրցույթին մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների ներկա գտնվելու հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՔԾ-ի պետի 2015թ. մարտի 26-ի թիվ 03-Լ հրամանով հաստատված «Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգ»-ով: Նշված կարգի ուսումնասիրության արդյունքում մրցույթը լուսաբանելու համար նախապես դիմելու և թույլտվություն ստանալու վերաբերյալ որևէ դրույթ չհայտնաբերվեց, ինչպես և չէր հայտնաբերվել նախկինում: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ի դեմս իր պաշտոնյաների, պատրաստ է դիմել բոլոր հանրավոր միջոցների՝ առանց դրանց միջև խտրականություն դնելու միայն այն նպատակով, որ սահմանափակի կազմակերպվող մրցույթների թափանցիկությունն ու

հրապարակայնությունը, ինչը արատավոր և չափազանց վտանգավոր երևույթ է և անհամատեղելի է ժողովրդավարական և իրավական պետության հետ:

1.5. 2016թ. մարտի 9-ին հատուկ քննչական ծառայությունում հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթը.

1.5.1. 2016թ. փետրվարի 29-ին «ԻԵՄ» իհկ-ն դիմել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ խնդրելով հնարավորություն ընձեռել դիտարկելու 2016թ. մարտի 9-ին ՀՀ ՀՔԾ-ի կողմից հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվելիք մրցույթը: 2016թ. մարտի 4-ին ստացվել է ՀՔԾ-ի 02.03.2016թ. ամսաթվով մակագրված պատասխանը, ըստ որի՝ ՀՔԾ-ն կրկին հրաժարվում է թույլատրել ԻԵՄ-ի դիտորդներին դիտարկելու մարտի 9-ի մրցույթի ընթացքը՝ բերելով նույն պատճառաբանությունները, ինչ նախկինում: ԻԵՄ-ի դիտորդները կրկին փորձել են դիտարկել մրցույթը՝ գնալով ՀՔԾ: Վերջինս այս անգամ ևս հնարավորություն չի ընձեռել ԻԵՄ-ին կատարելու հանրային հսկիչի իր գործառույթը:

1.6. Կազմակերպված մրցույթների մասին տեղեկատվության տրամադրման մերժում ՀՔԾ-ի կողմից.

1.6.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՔԾ-ն չի թույլատրում ԻԵՄ-ին դիտարկել ՀՔԾ-ում քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթները, ինչպես նաև այդ մրցույթների հանրային մեծ կարևորությունը՝ ԻԵՄ-ը մի շարք հարցումներ է ուղարկել ՀՔԾ՝ հայցելով տեղեկատվություն անցկացված մրցույթների վերաբերյալ: Մասնավորապես՝ ԻԵՄ-ը փորձել է հստակեցնել, թե 2014թ.-ից սկսած հատուկ քննչական ծառայությունում անցկացված մրցույթներին մասնակցելու նպատակով քանի անձ է դիմել, քանիսն են մասնակցել, քանիսն են հաղթել և նշանակվել թափուր պաշտոններում, հաղթողների անունները, կենսագրությունը (կրթությունը և աշխատանքային փորձը), յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ կատարված քվեարկության արդյունքները և դրանց հիման վրա տրված եզրակացությունը, մրցույթի և քվեարկության ընթացքի արձանագրությունները և այլն: Բոլոր հարցումներին ի պատասխան՝ հատուկ քննչական ծառայությունը հրաժարվել է տեղեկատվություն տրամադրել՝ նշելով, որ հայցվող տեղեկատվությունը պարունակում է հավակնորդների անձնական կյանքին վերաբերող տեղեկություն, որը ենթակա է պաշտպանության՝ պայմանավորված այդ տեղեկատվության անձնական կյանքի գաղտնիության սահմանադրական սկզբունքի մեջ ներառվելու հանգամանքով (ձևակերպումները ՀՔԾ-ինն են):

- 1.6.2. ՀՔԾ-ն տրամադրել է միայն թափուր պաշտոնների համար դիմած անձանց, մրցույթին մասնակցած հավակնորդների և մրցույթում հաղթած և թափուր պաշտոնները զբաղեցրած քննիչների թվի վերաբերյալ տեղեկատվություն: Ըստ այդ տվյալների՝ 2014թ. նոյեմբերի 24-ին կազմակերպված մրցույթին մասնակցելու նպատակով դիմել է 6 անձ, մասնակցել են նույնքան հավակնորդներ, և բոլոր վեցն էլ հաղթել են մրցույթում և նշանակվել քննչական ծառայողի թափուր պաշտոնում: 2015թ. ապրիլի 27-ին և հոկտեմբերի 9-ին անցկացված մրցույթին մասնակցելու համար դիմել է համապատասխանաբար 5 և 2 անձ, որոնք բոլորը մասնակցել և հաղթել են նշված մրցույթներում: 2016թ. փետրվարի 1-ին հատկապես կարևոր գործերով քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված մրցույթին մասնակցելու համար դիմել է 3 անձ, նույնքան էլ մասնակցել, հաղթել է մրցույթում և նշանակվել թափուր պաշտոններում: 2016թ. մարտի 9-ի մրցույթին մասնակցելու համար դիմել, մասնակցել, հաղթել և նշանակվել է 2 անձ:
- 1.6.3. Այսպիսով՝ ստացվում է, որ հատուկ քննչական ծառայությունում ինչ-որ անբացատրելի պատահականությամբ պաշտոն զբաղեցնելու համար դիմում է ճիշտ այնքան մարդ, որքան թափուր պաշտոն կա, բոլոր դիմողները համապատասխանում են քննչական ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար ներկայացվող պահանջներին, մրցույթի բոլոր մասնակիցները հաղթում են և նշանակվում թափուր պաշտոններում: Անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում ի տարբերություն Քննչական կոմիտեի քննիչների աշխատավարձերն ավելի բարձր են, աշխատանքային պայմաններն ավելի բարձր մակարդակի և առհասարակ քննիչների միջավայրու ՀՔԾ-ը համարվում է էլիտած ծառայություն ուր ցանկանում է աշխատել յուրաքանչյուր երկրորդ քննիչ: Այս ամենի հաշվառմամբ կարելի է եզրակացնել, որ հատուկ քննչական ծառայությունում թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված մրցույթները կրում են ձևական բնույթ, և թափուր պաշտոնների համալրման նպատակով կազմակերպվելիք մրցույթների մասին հայտարարությունները տրվում են՝ նախապես իմանալով, թե ովքեր են մասնակցելու և հաղթելու այդ մրցույթներում, նույնիսկ անկախ այն բանից թե այդ մրցույթ կոչվող արարողությունն ինչպես կանցնի: Դա է պատճառը, որ ՀՔԾ-ն մրցույթների նկատմամբ չի թույլատրում հանրային հսկողություն:

1.7. Մրցութային հանձնաժողովի կարգավիճակը, անկախությունն ու գործունեությունը.

1.7.1. ՀՀ հատուկ քննչական ծառայության մասին օրենքի 8-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն. « ... Մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո մասնակիցը՝ իր արդյունքների մասով, կամ մրցութային հանձնաժողովի անդամը մեկ ժամվա

ընթացքում այդ արդյունքները կարող է գրավոր բողոքարկել հատուկ քննչական ծառայության պետին: ...»:

1.7.2. ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 28-ի թիվ 180-Ն որոշմամբ սահմանված է ՀՔԾ-ում անցկացվող մրցույթների թափանցիկության և հրապարակայնության ապահովման հանձնաժողովի պարտավորությունը:

1.7.3. Հաշվի առնելով այն, որ սկսած 2014 թվականից ՀՔԾ մրցույթները պարբերաբար անցկացվել են թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների խախտմամբ, ընդ որում՝ ՀՔԾ պաշտոնյաների որոշումների հիման վրա, այն դեպքում երբ մրցութային հաձնաժողովը, որը բաղկացած է 3 իրավաբան-գիտնականներից և 4 պետական պաշտոնյաներից, ինքն է կրում հրապարակայնությունն ապահովելու պարտականությունը, սակայն ոչ մի հանձնաժողովի անդամ ոչ մի կերպ չի մտահոգվել և արտահայտվել իր վերը հիշատակված պարտականության ապահովման մասին: Մրա հետ մեկտեղ, հաշվի առնելով այն, որ այս հանձնաժողովի որոշումների վերանայումը վերապահված է ՀՔԾ-ի պետին՝ հանձնաժողովի անկախության և ինքնուրույնության հարցում կասկածներ չեն մնում, ինչպես նաև պարզ են դառնում այդ իրավաբան-գիտնականների և պետական պաշտոնյաների որակական հատկանիշները, քանի որ մասնագիտական որակներն ու անկախությունը իրար հետ փոխկապակցված են: Հանձնաժողովի որոշումների վերանայման իրավասությունը ՀՔԾ-ի պետին վերապահելն էլ, իր հերթին, ոչ միայն չի նպաստում մրցութային համակարգի զարգացմանը՝ իր բոլոր դրական դրսևորումներով, այլ ուղղակի նվաստացուցիչ է անկախ հանձնաժողովի անդամների համար: Ուստի այս մասով ևս անհրաժեշտ է կատարել փոփոխություն, քանի որ տրամաբանությունից դուրս է յոթ հոգանոց հանձնաժողովի (որի անդամների մեջ են մտնում երեք իրավաբան-գիտնականներ) որոշումների վերանայումը վերապահել ՀՔԾ-ի պետին:

1.8. ՀՀ հատուկ քննչական ծառայության գործողությունների իրավաչափությունը

1.8.1. Խոչընդոտելով հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների՝ հանրային հսկիչի իրենց գործառույթի իրականացմանը՝ ՀՔԾ-ն խախտել է նրանց արտահայտվելու ազատության, այդ թվում՝ տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) արտահայտման ազատության իրավունքին միջամտության իրավաչափությունը որոշելիս մշտապես կիրառում է եռաստիճան թեստը, որի համաձայն՝ արտահայտվելու ազատության իրավունքը կարող է սահմանափակվել, եթե նման սահմանափակումը.

- **«Սահմանված է օրենքով»:** Արտահայտվելու ազատության, այդ թվում՝ տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքը չի կարող սահմանափակվել պետական պաշտոնյայի քննահաճույքով: ՄԻԵԴ-ը *Միլվերն ընդդեմ Միացյալ Թագավորության¹* վճռում սահմանում է չափորոշիչներ, որոնց համապատասխան՝ ներպետական դատարանը պետք է գնահատի, թե արդյոք սահմանափակումը սահմանված է ներպետական օրենսդրությամբ, արդյոք այդ օրենսդրությունը իրապես մատչելի է քաղաքացու համար և բավարար չափով հստակ՝ քաղաքացուն հնարավորություն տալու համապատասխան իրավական օգնություն ստանալու միջոցով կարգավորելու իր վարքագիծը:
- **«Հետապնդում է իրավաչափ նպատակ».** արտահայտվելու ազատության, այդ թվում՝ տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքը սահմանափակելու համար պետք է լինի իրավաչափ նպատակ: Իրավաչափ այդ նպատակները սահմանված են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասով. սահմանափակումները պետք է լինեն ի շահ ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու, կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու: Պետական մարմինների՝ արտահայտվելու ազատության իրավունքը սահմանափակելուն ուղղված ոչ բոլոր որոշումներն են համապատասխանում ժողովրդավարական կառավարմանը: Օրինակ՝ պետական մարմիններին քննադատությունից պաշտպանելու նպատակը երբեք չի կարող արդարացնել ազատ արտահայտվելու սահմանափակումը:²³
- **«Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում».** արտահայտվելու ազատության, այդ թվում՝ տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում պետք է իսկապես անհրաժեշտ լինի: Եթե նույնիսկ նման սահմանափակումը հստակ կերպով համապատասխանում է օրենքին և հետապնդում է իրավաչափ նպատակ, այն կբավարարի եռաստիճան թեստի պահանջները միայն այն դեպքում, երբ իսկապես անհրաժեշտ լինի այդ իրավաչափ նպատակը պաշտպանելու համար: Կիրառվող միջոցը պետք է սահմանափակի արտահայտվելու ազատության իրավունքը հնարավորինս քիչ: Սահմանափակումը չպետք է լինի ծավալուն և չթիրախավորված: Օրինակ՝ չափազանց ծավալուն սահմանափակում է համարվում ազգային անվտանգության պաշտպանության նպատակով երկրի զինված ուժերի մասին բոլոր քննարկումներն արգելելը: Կիրառվող միջոցի ազդեցությունը պետք է համաչափ լինի և արտահայտվելու ազատության իրավունքին պատճառվող վնասը չպետք է

¹ Silver v. The United Kingdom, 25/03/1983, application N 5947/72

² Article 19, Freedom of Expression. Limitations. Available at: <https://www.article19.org/pages/en/limitations.html>

³ *Կումպանան ընդդեմ Ռումինիայի (Cumpana v. Romania, 33348/96, դիմում թիվ 17/12/2004, 86-րդ պարբերություն)*

գերազանցի այդ սահմանափակման դրական հետևանքները: Դատարանը պետք է հաշվի առնի տվյալ պահին առկա բոլոր հանգամանքները ազատ խոսքի սահմանափակման վերաբերյալ որոշում կայացնելուց առաջ: Ըստ ՄԻԵԴ-ի՝ թեսթի այս աստիճանը գնահատելիս ներպետական դատարանը պետք է որոշի, թե արդյոք միջամտությունն «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»՝ մտապահելով, որ «անհրաժեշտը հաճախ ավելին է, քան «օգտակարը», «ողջամիտը» կամ «ցանկալին»... և որ այն պետք է բխի «ճնշող հասարակական կարիքից», լինի համաչափ հետապնդող իրավաչափ նպատակին... և որ սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հիմնավորվի փաստերով: ⁴

- 1.8.2. Եռաստիճան այս թեսթը ՀՔԾ-ի գործողության նկատմամբ կիրառելիս ակնհայտ է դառնում, որ միջամտությունը ԻԵՄ-ի դիտորդական իրավունքին ա. «սահմանված չէ օրենքով» և բ. «անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում»:
- 1.8.3. Այսպես, միջամտությունը սահմանված չէ օրենքով, քանի որ չկան այնպիսի սահմանափակումներ պարունակող կարգավորումներ, որոնց հիման վրա հնարավոր է սահմանափակել դիտորդական առաքելության իրականացումը, արգելել դիտորդների մասնակցությունը հանձնաժողովների աշխատանքներին և/կամ մերժել պահանջված տեղեկատվության և փաստաթղթերի տրամադրումը:
- 1.8.4. Ավելին, նշված բաց մրցույթների անցկացման կարգը, որը կարգավորվում է «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխով սահմանված կարգով և «Հատուկ քննչական ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 180-Ն որոշմամբ, նախատեսում է մրցույթն իրականացնող հանձնաժողովի մրցույթների թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովելու պարտավորությունը: Հիշյալ կարգերով սահմանված է նաև, որ բաց մրցույթին կարող են ներկա գտնվել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև հրավիրված դիտորդներ, մրցույթի արդյունքների ամփոփումը տեղ է գտնում պաշտոնական հրապարակման մեջ, իսկ մրցույթին դիմող և հաղթող քաղաքացիները երդվում են հանդիսավոր արարողությամբ:
- 1.8.5. Արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակման մյուս պայմանը՝ անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում, կարող է պայմանավորվել այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու նպատակով: ՀՔԾ-ն իր մերժումը հիմնավորել է այլ անձանց իրավունքները, այս դեպքում՝ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությամբ: Առկա են արտահայտվելու ազատության և անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի

⁴ Բարթոլդն ընդդեմ Գերմանիայի, (*Barthold v. Germany*, 25/03/1985, դիմում թիվ 8734/79, 55-րդ պարբերություն)

հավասարակշռությանն առնչվող մի շարք կարգավորումներ: ՄԻԵԴ-ը բազմիցս անդրադարձել է տեղեկատվության մատչելիությանը անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության համատեքստում: ՄԻԵԴ-ը նշել է, որ տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս ներպետական դատարանները պետք է հաշվի առնեն այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են հանրային կարևորություն ներկայացնող խնդրի քննարկմանը նպաստելը, հայցվող տեղեկատվության հանրային կարևորությունը և տեղեկատվությունը հայցելու նպատակը⁵:

Համապատասխանաբար, այն դեպքում, երբ հասարակությանն անհայտ մասնավոր անձը կարող է պահանջել իր անձնական կյանքի որոշակի պաշտպանություն, նույնը չի գործում հանրային գործիչների դեպքում⁶: *Guja v. Moldova* թիվ 14277/04 գործով հատկապես կարևոր էր Դատարանի ընդգծված դիտարկումն առ այն, որ «ժողովրդավարական հասարակությունում պետության ցանկացած գործողություն կամ անգործություն պետք է վերահսկվի ոչ միայն օրենսդիր և դատական մարմինների կողմից, այլև մեդիայի և ավելի լայն հանրության կողմից: Հանրային շահը, որ հանրությունը կարող է ունենալ կոնկրետ տեղեկատվության վերաբերյալ շատ դեպքերում կարող է ավելի կանոն լինել, քան օրենքով սահմանված կարգով գաղտնիության իրավունքի պաշտպանությունը»: Օրինակ՝ *Bucur and Toma v. Romania* գործով Դատարանը գտավ, որ Ռումինիայի անվտանգության ծառայության (Romanian Intelligence Services (RIS)) հնարավոր անօրինական գործունեության բացահայտման վերաբերյալ տեղեկատվության ստանալու շահը ավելի կարևոր նշանակություն ունի ժողովրդավարական հասարակությունում, քան այդ մարմնի գործունեության վերաբերյալ գաղտնիության սկզբունքի պահպանման շահը:

- 1.8.6. Պետական մարմնի կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքի համատեքստում Դատարանն առանձնացրել է հասարակական կազմակերպություններին՝ որպես պետական մարմինների գործունեության նկատմամբ ուղղակիորեն հանրային հսկողություն իրականացնող մարմին՝ վերջիններիս օժտելով ավելի բարձր պաշտպանությամբ⁷: Այս առումով Դատարանի արտահայտած դիրքորոշումն առ այն, որ «հատկապես այն դեպքերում, երբ տեղեկատվություն ստանալու ազատությունը վերաբերում է քաղաքական գործիչներին, **հանրային և պետական ծառայողներին կամ մարմիններին** առնչվող հնարավոր կոռուպցիայի կամ այլ անօրինական

⁵ *Leempoel & S.A. ED. Ciné Revue v Belgium*-ի գործով

⁶ *Minelli v. Switzerland* թիվ 14991/02 գործով

⁷ *Voskuil v. The Netherlands*-ի թիվ 64752/01 գործով

գործունեության վերաբերյալ... հասարակական կազմակերպությունները տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության բարձրագույն շեմից պետք է օգտվեն»: *Tarsasag a Szabadsagjogokert v Hungary* գործով Դատարանը նշել է, որ նմանատիպ դեպքերում հասարակական կազմակերպությունը կատարում է իր «հանրային հսկիչ» գործառույթը և նպատակ է հետապնդում հանրությանը հասցնել հանրային կարևորության և հանրային քննարկում խթանող տեղեկատվություն, ուստի պետական մարմինն ունի հայցվող տեղեկատվությունը տրամադրելու պարտավորություն:

- 1.8.7. Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ ՀՔԾ-ի կողմից պետական պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների դիտարկումն ու լուսաբանումն արգելելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժելը անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում, քանի որ նման տեղեկատվության հասանելիությունը հետապնդում է ավելի բարձր նպատակ՝ պայմանավորված պետական ծառայություն իրականացնող անձանց ընտրության, պետական մարմինների գործունեության թափանցիկության հանրային շահով:

1.9. Հատուկ քննչական ծառայության գործողությունների բողոքարկում.

- 1.9.1. Համարելով ՀՀ հատուկ քննչական ծառայության գործողությունները (մասնավորապես մրցույթների դիտարկման և լուսաբանման արգելքը, ինչպես նաև մրցույթների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժելը) ոչ իրավաչափ՝ ԻԵՄ-ը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով ճանաչել ՀՔԾ-ի գործողությունների ոչ իրավաչափությունը և պարտավորեցնել վերջինին տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Ներկայացվել է երկու հայցադիմում: Առաջին հայցադիմումը ներկայացվել է 2015թ. հունվարի 26-ին՝ «Իլուր» և «Նյուզլայն» առցանց լրատվամիջոցների հիմնադիր հանդիսացող ՍՊ ընկերությունների հետ համատեղ: Երկրորդը՝ 2016թ. փետրվարի 22-ին միայն ԻԵՄ-ի կողմից: Երկու հայցադիմումներն էլ ընդունվել են վարույթ ՀՀ վարչական դատարանի կողմից, հարուցվել են ՎԴ/0243/05/15 և ՎԴ/0953/05/16 վարչական գործերը: Առաջին հայցադիմումով վիճարկվում է 2014թ. նոյեմբերի 25-ին քննչական ծառայությունում քննչական ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված մրցույթի շրջանակներում ԻԵՄ-ի, ինչպես նաև՝ «Իլուր» և «Նյուզլայն» առցանց լրատվամիջոցների դիտորդություն իրականացնելու և լուսաբանման իրավունքների սահմանափակմանն ու այդ մրցույթների վերաբերյալ հայցվող տեղեկատվությունը չտրամադրելուն ուղղված գործողությունների իրավաչափությունը: Երկրորդով՝ վիճարկում է 2016թ. փետրվարի 1-ին ՀՀ քննչական ծառայությունում հատկապես կարևոր գործերի

քննիչների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված մրցույթի շրջանակներում ԻԵՄ-ի առջև ստեղծված խոչընդոտների, ինչպես նաև այդ և նախորդ մրցույթների վերաբերյալ պահանջվող տեղեկատվության տրամադրումը մերժելու իրավաչափությունը: Առաջին դատական գործով ՀՀ վարչական դատարանը՝ դատավոր Կարեն Ավետիսյանի նախագահությամբ, 2016թ. մարտի 14-ին կայացրել է ըստ էության վճիռ, որով մերժել է ԻԵՄ-ի, ինչպես նաև երկու լրատվամիջոցների հայցադիմումը: Երկրորդ դատական գործը գտնվում է ընթացքի մեջ:

- 1.9.2. ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/0243/05/15 վարչական գործով իր 2016թ. մարտի 14-ի վճռում անդնադարձել է ՀՔԾ-ի կողմից ԻԵՄ-ի՝ մրցույթը դիտարկելու հնարավորություն ընձեռելու խնդրանքով ներկայացրած դիմումի մերժմանը: Վարչական դատարանը եզրակացրել է, որ այդ գործողությունն իրավաչափ է: Հղում կատարելով «ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոն զբաղեցնելու համար բաց մրցույթի անցկացման կարգի» 59-րդ կետին՝ դատարանը նշել է, որ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով մրցույթին կարող են ներկա գտնվել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև՝ հրավիրված դիտորդներ: Ըստ դատարանի՝ դա նշանակում է, որ դիտորդական առաքելություն կարող է իրականացվել այն դիտորդների կողմից, որոնք Ծառայության կողմից հատկապես հրավիրվել են: Մինչդեռ, գործով պարզվել է, որ Ծառայությունը Կազմակերպությանը չի հրավիրել իրականացնելու դիտորդական առաքելություն:
- 1.9.3. Մյուս երկու հայցվորների (լրատվամիջոցների) վերաբերյալ դատարանը նշել է, որ չնայած վերջիններս քննության ընթացքում նշել են, որ փորձել են իրականացնել բաց մրցույթի լուսաբանում, գործի քննությամբ ձեռք չի բերվել որևէ պատշաճ ապացույց, որը կվկայեր այդ մասին: Ըստ դատարանի՝ հայցվորների կողմից ներկայացված ձայնագրությունը (որում հստակ լսվում է, թե ինչպես է հատուկ քննչական ծառայության մամուլի խոսնակն արգելում լրագրողներին մուտք գործել ՀՔԾ շենք մրցույթը լուսաբանելու համար) հնարավորություն չի տալիս արձանագրել, որ զրուցակիցները մի կողմից՝ հայցվոր ընկերությունների ներկայացուցիչներ են, մյուս կողմից՝ Ծառայության համապատասխան պաշտոնատար անձինք: Այսպիսով՝ առանց որևէ հավելյալ քննության կամ փորձաքննության, ինչը թույլ կտար պարզել՝ արդյոք ձայնագրության մեջ հնչող ձայները համապատասխանում են նշված լրագրողների և պաշտոնատար անձանց ձայներին, Վարչական դատարանը եզրակացրել է, որ անհիմն են հայցվոր ընկերությունների պնդումներն առ այն, որ Ծառայությունը հնարավորություն չի ընձեռել նրանց իրականացնելու բաց մրցույթի լուսաբանում:
- 1.9.4. Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ ՀՔԾ-ի ներկայացուցչի կողմից դատական գործի քննության ժամանակ չի հերքվել լրատվամիջոցների՝ բաց

մրցույթի լուսաբանում իրականացնելու փորձ կատարելու հանգամանքը, հետևապես դատարանը պետք է դրանք հաստատված համարեր՝ համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի, ըստ որի՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը համարում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է: Դատարանը ոչ միայն չի առաջնորդվել վերոնշյալ դրույթով, այլև առանց փորձաքննության եզրակացրել է, որ ձայնագրությունը չի ապացուցում, որ դրանում հնչող ձայները պատկանում են հայցվորների և ՀՔԾ-ի ներկայացուցիչներին: Նման մոտեցմամբ դատարանն արժեզրկում է վարչական արդարադատությունը: Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1- մասի. «Գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննությունն նշանակել ...»: Ուստի, համապատասխան կասկածների դեպքու դատարանը պարտավոր էր նշանակել այն փորձաքննությունը, որն անհրաժեշտ էր համարում:

1.9.5. Անդրադառնալով տեղեկատվություն տրամադրելուն ՀՔԾ-ին պարտավորեցնելու ԻԵՄ-ի և երկու լրատվամիջոցների պահանջին՝ դատարանը հղում է կատարել «Տեղեկատվության մասին ՀՀ օրենքի» 8-րդ հոդվածին, ըստ որի՝ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը: Հիմնվելով վերոնշյալ իրավական դրույթի վրա՝ դատարանը եզրակացրել է. *«...որ պահանջվող տեղեկատվության ծավալում ընդգրկված են այնպիսի տվյալներ, որոնք առնվազն պարունակում են այդ անձանց վերաբերյալ անձնական տվյալներ, ուստի և դրանց բացահայտումն անվերապահորեն կխախտի այդ անձանց անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Այսպիսով, դատարանը գտնում է, որ հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը տրամադրելուն պատասխանողին պարտավորեցնելու հայցվորների պահանջն անհիմն է և մերժման ենթակա, որպիսի պայմաններում դատարանն արձանագրում է, որ ըստ էության 2014թ. նոյեմբերի 24-ի մերժմամբ չեն խախտվում հայցվորների՝ ՀՀ Մահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված սուբյեկտիվ իրավունքները և (կամ) ազատությունները»:*

1.9.6. Դատարանը, փաստորեն, չի վերլուծել հայցվող ամբողջ տեղեկատվությունը՝ պարզելու համար, թե դրանից կոնկրետ որն է պարունակում անձնական տվյալ, իսկ որը՝ ոչ: Մասնավորապես՝ դատարանը չի հստակեցրել, թե արդյոք դիտում է անձի, պետական պաշտոնյայի, պետական ծառայողի կամ նման պաշտոնի հավակնորդի ինքնակենսագրությունը/կենսագրությունը, որը մրցույթի

մասնակցության թույլատրելիության հարցի լուծման համար էական պայման է, որպես անձնական տվյալ, որը ենթակա է պաշտպանության ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով: Դատարանը չի վերլուծել նաև անձնական տվյալ հասկացությունը: Հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին՝ դատարանը բնավ չի անդրադարձել նույն հոդվածի 2-րդ մասին, ըստ որի՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ: Ի վերջո, վերլուծելով պահանջվող տեղեկատվությունը՝ դատարանը կարող էր պարտավորեցնել ՀՔԾ-ին տրամադրել այն տեղեկատվությունը, որն անձնական տվյալ համարվել չի կարող:

1.9.7. Կիրառելով արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը որոշող եռաստիճան թեսթը՝ կարելի է եզրակացնել, որ դատարանի միջամտությունը ԻԵՄ-ի և լրատվամիջոցների իրավունքներին.

- **Սահմանված չէ օրենքով,**
- **Անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում:**

1.9.8. Վերոգրյալը բավական է եզրակացնելու համար, որ ՀՔԾ-ի, այնուհետև նաև Վարչական դատարանի գործողությունները եղել են ոչ իրավաչափ:

1.10. *Առաջարկություններ Հատուկ քննչական ծառայության մասին օրենքում անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ.*

- 1.10.1. Մրցույթների վերաբերյալ հայտարարությունների հրապարակում ՀՀ ՀՔԾ պաշտոնական կայքէջում,
- 1.10.2. Մրցութային հանձնաժողովի ձևավորման, անդամների առաջադրման, ինչպես նաև կազմի պարբերական թարմացման վերաբերյալ ավելի մանրամասն կարգավորումների նախատեսում,
- 1.10.3. Մրցույթների ընթացքում նաև անձնական հատկանիշների ստուգման անհրաժեշտության նախատեսում,
- 1.10.4. Մրցույթի ընթացքի արձանագրման և/կամ ձայնագրառման անհրաժեշտություն, որը պայմանավորված է նաև արդյունքների բողոքարկման իրավունքի ապահովմամբ,
- 1.10.5. Մրցույթի արդյունքների բողոքարկման համար ողջամիտ ժամկետների նախատեսում,
- 1.10.6. Մրցույթի արդյունքում հանձնաժողովի որոշման բողոքարկման այլ աստիճանի նախատեսում, քան ՀՔԾ-ի պետք, քանի որ գործող կարգավորումն իմաստազրկում և պատրանքային է դարձնում անկախ հանձնաժողովի կողմից կազմակերպվող մրցույթի գաղափարը, եթե ի վերջո այդ հանձնաժողովի որոշումը կարող է վերանայել ՀՔԾ-ի պետք,

- 1.10.7. Օրենքով դիտորդների և ՋԼՄ-ների գործունեության համար իրական երաշխիքների սահմանում, որպեսզի սահմանափակվի վարչական մարմնի հայեցողությունն ու կամայականությունը հանրային այսպիսի կարևորության իրադարձության կապակցությամբ հանրային հսկողության սահմանափակման հարցում,
- 1.10.8. Մրցութային բոլոր փաստաթղթերի հրապարակայնության հստակ ամրագրում, ինչը կնպաստի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների ապահովմանը:

2. *Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով 2015 և 2016թթ. անցկացված բաց մրցույթները.*

2015 և 2016թթ. ՀՀ գլխավոր դատախազության կողմից դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով կազմակերպվել և անց են կացվել բաց մրցույթներ, որոնք ԻԵՄ-ն իր դիտորդական առաքելության շրջանակներում փորձել է դիտարկել: Դատախազությունը, սակայն, բոլոր հնարավոր մեթոդներով խոչընդոտել է կազմակերպության՝ այդ առաքելության իրագործմանը: Առաջին դեպքում՝ 2015թ. դատախազությունն ընդհանրապես գաղտնի է պահել մրցույթի անցկացման օրերը և չի պատասխանել ԻԵՄ-ի՝ մրցույթը դիտարկելու հնարավորություն ստանալուն ուղղված դիմումին: Երկրորդ դեպքում, 2016թ. հունվարին, դատախազությունը տեղեկացրել է մրցույթի ժամանակացույցի մասին, սակայն արգելել է ԻԵՄ-ին մասնակցել այդ մրցույթներին և դիտարկել դրանց ընթացքը:

2.1. *Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթների հիմքում ընկած ներպետական օրենսդրությունը*

- 2.1.1. Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով մրցույթներն անց են կացվում «Դատախազության մասին» ՀՀ օրենքի և «Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման կարգ» սահմանելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունվարի 29-ի թիվ 8 հրամանի հիման վրա:
- 2.1.2. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է դատախազության որակավորման հանձնաժողովի կողմից տարին մեկ անգամ, որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվար ամսին, գլխավոր դատախազի սահմանած կարգով անցկացվող բաց մրցույթի միջոցով: Գլխավոր դատախազի հանձնարարությամբ դատախազների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների լրացուցիչ ստուգում:
- 2.1.3. Դատախազների թեկնածությունների ցուցակը կազմում է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը, որը բաղկացած է 9 անդամից: Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի 1 տեղակալ, 4 դատախազ, 4 իրավաբան գիտնական: Հանձնաժողովի անդամներին նշանակում է գլխավոր դատախազը՝ 3 տարի ժամանակով: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ եթե հանձնաժողովի 9 անդամներից 4-ն իրավաբան գիտնականներ են, այն հանգամանքը, որ հանձնաժողովի բոլոր անդամները նշանակվում են գլխավոր դատախազի կողմից, լրջորեն վտանգում է անցկացվող մրցույթի անկախությունն ու անաչառությունը:

- 2.1.4. Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի՝ դատախազ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ՀՀ այն քաղաքացին, ով՝
- Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով,
 - Տիրապետում է գրական հայերենին:
- 2.1.5. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի՝ դատախազության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը.
- Ով դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
 - Ով դատապարտվել է հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից,
 - Ով ունի դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն,
 - Ով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն, բացառությամբ այն անձանց, ովքեր ազատվել են նման ծառայությունից օրենքով նախատեսված կարգով ու հիմքով,
 - Ում նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով:
- 2.1.6. Որակավորման հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտերի ընդունման մասին առնվազն մեկ ամիս առաջ հրապարակում է հայտարարություն:
- Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը պարտավոր է ներկայացնել՝
1. Անձը հաստատող փաստաթուղթ,
 2. Հավակնորդի մոտ բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ,
 3. Հավակնորդի կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իր կողմից իրավաբանի կոչում ձեռք բերելուց հետո իրականացված մասնագիտական իրավաբանական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցներ (այդ թվում՝ փաստաթղթեր, որոնք հավաստում են մասնագիտական իրավաբանական ստաժ դիտարկվող աշխատանքում աշխատանքային պարտականությունները),
 4. Պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ (եթե արական սեռի հավակնորդ է),
 5. Դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին կառավարության կողմից սահմանված կարգով տրված փաստաթուղթ:

2.1.7. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման մրցույթն անց է կացվում հարցազրույցի ձևով: Հարցազրույցի ժամանակ որակավորման հանձնաժողովը ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական ունակությունները և բարոյական հատկանիշները, ինչպես նաև նրա կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը օրենքով նախատեսված այլ պահանջներին: Ստուգումը կատարվում է այդ նպատակով կազմված հարցաշարի հիման վրա տրված հարցերի միջոցով: Հարցաշարում զետեղված առաջադրանքները բովանդակում են առարկայական հարցադրումներ ստորև թվարկված բնագավառներից՝ հետևյալ տոկոսային հարաբերությամբ՝

- ՀՀ Սահմանադրություն՝ 20 տոկոս,
- ՀՀ օրենքը « Դատախազության մասին»՝ 20 տոկոս,
- ՀՀ քրեական և քրեական դատավարական օրենսդրություն՝ 40 տոկոս,
- Քաղաքացիական, քաղաքացիադատավարական, քրեակատարողական և դատախազության լիազորություններից բխող այլ օրենսդրություն՝ 20 տոկոս:

2.1.8. Համաձայն ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունվարի 29-ի թիվ 8 հրամանով սահմանված «Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման կարգի» 23-րդ կետի՝ հարցազրույցի ընթացքում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հավակնորդին կարող է տալ առավելագույնը երկու հարց հարցաշարից, բայց դրանք, ընդհանուր հաշվարկով, չպետք է գերազանցեն տասներկուսը: Յուրաքանչյուր հարցից հետո հարց տվող հանձնաժողովի անդամը հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելը, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ նշում ճիշտ պատասխանը: Հարցին պատասխանելու համար հավակնորդին, ցանկության դեպքում, տրվում է ողջամիտ ժամանակ՝ պատրաստվելու և մտքերը հավաքելու համար: Հարցազրույցից հետո յուրաքանչյուր մասնակցի համար անց է կացվում քվեարկություն: Հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր հավաքել են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները: Հանձնաժողովը դրական եզրակացություն է տալիս տրված ընդհանուր հարցերից 70 տոկոս և ավելի հարցերին ճիշտ պատասխանած հավակնորդի համար, որը որոշվում է բաց քվեարկության միջոցով՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի կողմից, ինչի մասին կազմվում է արձանագրություն: Եթե մասնակիցներից ոչ մեկը չի հավաքել մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ ու մրցույթում հաղթող չի ճանաչվել, ապա անց է կացվում նոր մրցույթ: Մրցութին մասնակցող հավակնորդներից յուրաքանչյուրի համար հանձնաժողովը կազմում է համապատասխան եզրակացություն՝ դրանում նշելով հետևյալը.

- Մրցույթի անցկացման հիմքերը,
- Մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,
- Հաղթող ճանաչված մասնակիցների ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ այբբենական կարգի, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, անձնագրային տվյալները,
- Հաղթող ճանաչված մասնակիցներից յուրաքանչյուրի հավաքած միավորների քանակը՝ սույն կարգով նախատեսված տոկոսային արտահայտմամբ.
- Հարցազրույցի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից յուրաքանչյուրի վերաբերյալ Հանձնաժողովի քվեարկության արդյունքները:

2.1.9. Եզրակացությունը պետք է ստորագրեն հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները: Հատուկ կարծիք ունեցող անդամները ստորագրելիս նշում են այդ մասին՝ ստորագրության կողքը գրառելով «հատուկ կարծիքը կցվում է» բառերը:

2.1.10. Համաձայն ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունվարի 29-ի թիվ 8 հրամանով սահմանված «Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման կարգի» 32-րդ կետի՝ մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո անհապաղ: Մրցույթի արդյունքների հրապարակման մասին հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկ, որը կնքվում է: Մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկի մեջ նշվում են՝

- դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար դիմած անձանց ազգանունները, անունները և հայրանունները,
- Մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը, մրցույթի արդյունքների հրապարակման ամսաթիվը և ժամը,
- Մրցույթի արդյունքում յուրաքանչյուր հավակնորդի հավաքած միավորները:

2.1.11. Պարզ չէ, թե ինչ նպատակով է կազմվում այս հրապարակման թերթիկը, սակայն անունը հուշում է, որ հրապարակման թերթիկը ենթակա է հրապարակման: Այնինչ դատախազությունը չի հրապարակում ոչ այս թերթիկը, ոչ էլ այդ թերթիկում ընգրկված տեղեկատվությունը: Ավելին, նույնիսկ վերոնշյալ տեղեկատվությունն ստանալու նպատակով կատարվող հարցումները ՀՀ գլխավոր դատախազությունը մերժում է: Դատախազությունը, մասնավորապես, հրաժարվում է տեղեկատվություն տրամադրել մրցույթին մասնակցելու համար դիմած հավակնորդների և մրցույթում հաղթած թեկնածուների անվանական տվյալների և մրցույթի ընթացքում հավաքած միավորների վերաբերյալ:

2.1.12. Հանձնաժողովի աշխատանքները համարվում են ավարտված՝ եզրակացությունը տալուց հետո:

2.1.13. Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ներկայացվում են գլխավոր դատախազին, որն իր համար ընդունելի թեկնածուներին ընդգրկում է դատախազների թեկնածությունների ցուցակում («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի –րդ մաս):

- 2.1.14. Այս դրույթն անընդունելի է, քանի որ չկան սահմանված հստակ չափանիշներ, որոնց վրա հիմնվելով՝ գլխավոր դատախազը կորոշի՝ ում ընդգրկել դատախազների թեկնածությունների ցուցակում, իսկ ում՝ ոչ: Այն հանգամանքը, որ այս դրույթը հնարավորություն է տալիս գլխավոր դատախազին ցուցակում ընդգրկել իր համար **ընդունելի** թեկնածուին, նրա համար կամայական որոշումներ կայացնելու լայն դաշտ է ստեղծում, ինչը պարունակում է նաև մեծ կոռուպցիոն ռիսկեր: Հասկանալի չէ, թե ինչու են ցուցակում ընդգրկվում ոչ թե որակավորման հանձնաժողովի կողմից դրական գնահատված բոլոր հավակնորդները, այլ միայն նրանք, որոնք ընդունելի են գլխավոր դատախազի համար:
- 2.1.15. Դատախազների թեկնածությունների ցուցակը դատախազի կողմից հաստատվելուց հետո, այն հրապարակվում է հավակնորդներին՝ անձնակազմի բաժնի կողմից: Նշվածը ենթադրում է, որ բոլոր հավակնորդներին ներկայացվում է ամբողջական ցուցակը, ներառյալ՝ ցուցակում ընդգրկված անձանց անուն, ազգանունները: Այս պարագայում անհասկանալի է դառնում, թե ինչու չի կարող նույն ցուցակը հրապարակվել ամբողջ հանրությանը:
- 2.1.16. «Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման կարգ» սահմանելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունվարի 29-ի թիվ 8 հրամանի 37-րդ կետի համաձայն՝ մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել օրենքով նախատեսված կարգով: Հստակեցված չէ, թե որ օրենքն է սահմանում նման կարգ: «Դատախազության մասին» ՀՀ օրենքը նման ընթացակարգ չի սահմանում:
- 2.1.17. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը Արդարադատության ակադեմիայում անցնում է ուսումնառության ծրագիր և հանձնում որակավորման քննություն: Որակավորման քննություն չհանձնած անձը հանվում է դատախազների թեկնածությունների ցուցակից:
- 2.1.18. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Անձն ազատվում է արդարադատության ակադեմիայում ուսումնառության դասընթացներից և որակավորման քննություն հանձնելուց, եթե՝
- Ունի դատախազի, դատավորի, քննիչի պաշտոնում կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի,
 - Իրավաբանական գիտությունների դոկտոր է,
 - Իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի 5 տարվա ստաժ:

2.2. Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով 2015թ. հունվարին անցկացված բաց մրցույթը

- 2.2.1. 2014թ. նոյեմբերի 19-ին ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայքում հրապարակվել է հայտարարություն, որի համաձայն՝ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով՝ 2015թ. հունվարին անց է

- կացվելու բաց մրցույթ: Հայտարարության տեքստում, որպես դիմումների ներկայացման վերջնաժամկետ, նշված է եղել 2014թ. դեկտեմբերի 19-ը:
- 2.2.2. 2015թ. հունվարի 19-ին, տեսնելով, որ որևէ տեղեկատվություն անցկացվելիք բաց մրցույթի վերաբերյալ չի հրապարակվում դատախազության պաշտոնական կայքում, ԻԵՄ-ի աշխատակիցը զանգահարել է վերոնշյալ հայտարարության տեքստում ներկայացված հեռախոսահամարով՝ մրցույթի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով: Հեռախոսագրույցի ընթացքում դատախազության աշխատակցուհին, ասել է, որ մրցույթի անցկացման օրը դեռ պարզ չէ: Նույն օրը ԻԵՄ-ի կողմից դատախազություն առձեռն մուտքագրվել է դիմում, որով կազմակերպության նախագահը խնդրել է հնարավորություն ընձեռել դիտորդական առաքելություն իրականացնել ՀՀ գլխավոր դատախազությունում անցկացվելիք առաջիկա մրցույթի ժամանակ, ինչպես նաև տրամադրել տեղեկատվություն դրա ժամանակացույցի վերաբերյալ:
- 2.2.3. Մինչև 2015թ.փետրվարի 2-ը պատասխան չստանալով՝ ԻԵՄ-ի աշխատակիցը կրկին զանգահարել է ՀՀ գլխավոր դատախազություն, հեռախոսագրույց ունեցել ՀՀ գլխավոր դատախազության Անձնակազմի կառավարման բաժնի պետ Արթուր Ոսկանյանի հետ, որը հանդիսանում է մրցույթի կազմակերպչական հարցերով պատասխանատուն: Հեռախոսագրույցի ընթացքում վերջինս հայտնել է, որ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով կազմակերպվող մրցույթն անց է կացվել 2015թ. հունվարի 16-29-ը ընկած ժամանակահատվածում, և որ նա տեղյակ չէ, թե ինչու է ԻԵՄ-ի դիմումը մնացել անպատասխան: Ա. Ոսկանյանը նշել է, որ անց է կացվել բաց և հրապարակային մրցույթ: Այն հարցին, թե ինչու բաց և հրապարակային մրցույթի անցկացման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի հրապարակվել դատախազության պաշտոնական կայքում, Ոսկանյանը պատասխանել է, որ հավակնորդները տեղեկացվել են անցկացվելիք մրցույթի ժամանակացույցի մասին: Այն հարցին, թե ինչպես է ապահովվել մրցույթի հրապարակայնությունը, արդյո՞ք մրցույթին ներկա են եղել և լուսաբանել լրագրողներ, պատասխանը եղել է բացասական: Ա. Ոսկանյանը նշել է, որ մրցույթը եղել է հրապարակային, քանի որ հավակնորդները ներկա են եղել դրան:
- 2.2.4. 2015թ. փետրվարի 3-ին ԻԵՄ-ը դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություն, թե արդյո՞ք հունվարի 16-29-ը ընկած ժամանակահատվածում անցկացված բաց մրցույթի վերաբերյալ որևէ տեղեկատվություն հրապարակվել է, եթե այո, ապա՝ որտեղ: Ինչպես նաև, ԻԵՄ-ի նախագահը խնդրել է պատճառաբանել, թե սույն թվականի հունվարի 19-ին ԻԵՄ-ի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն մուտք արված դիմումին ինչու պատշաճ կերպով ընթացք չի տրվել և ինչու է այն, առհասարակ, թողնվել անպատասխան:
- 2.2.5. 2015թ. փետրվարի 12-ին ստացվել է ՀՀ գլխավոր դատախազության պատասխանը, որի համաձայն՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքը դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող բաց մրցույթին մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների, ինչպես նաև դիտորդների ներկա գտնվելու պարտադիր պայման չի նախատեսում:

- 2.2.6. 2015թ. փետրվարի 11-ին ԻԵՄ-ը հարցում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն ՀՀ գլխավոր դատախազության կողմից սույն թվականի հունվարի 16-29-ը դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացված բաց մրցույթի վերաբերյալ: Մասնավորապես՝ ԻԵՄ-ի նախագահը խնդրել է ներկայացնել մրցութային հանձնաժողովի կազմը, հանձնաժողովի ձևավորման կարգը, մրցութային բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ դիմողների թիվը, մրցույթի մասնակիցների թիվը, հավակնորդների ինքնակենսագրությունը, մրցութային հարցաշարերը, յուրաքանչյուր հավակնորդի գնահատման արդյունքները՝ ըստ հանձնաժողովի առանձին անդամների: ԻԵՄ-ի նախագահը նաև խնդրել է մանրամասնել, թե ինչ չափանիշներով է իրականացվում մասնակիցների գնահատումը:
- 2.2.7. 2015թ. մարտի 13-ին ստացվել է ՀՀ գլխավոր դատախազության պատասխանը, որում հղում է արվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, որի համաձայն՝ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Հղում է արվել նաև ՀՀ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 23-րդ հոդվածին, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական և ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:
- 2.2.8. Ըստ ՀՀ գլխավոր դատախազության՝ ԻԵՄ-ի կողմից հայցվող տեղեկատվությունը համարվում է անձնական գաղտնիք, քանի որ «անձնական գաղտնիքը»՝
- անձի իրավունքն է ինքնուրույն որոշելու իր վարքագիծը հասարակության մեջ, ինքնուրույն կարգավորելու տեղեկատվության ռեժիմը և պահանջելու այլ անձնանցից պահպանելու այդ իրավունքները,
 - անձի վերաբերյալ տեղեկությունն է, որի հրապարակմամբ վերջինս շահագրգռված չէ:
- 2.2.9. Դատախազությունը նշել է նաև, որ որևէ իրավական ակտով, մասնավորապես՝ օրենքով, սահմանված չէ հավակնորդների ներկայացրած փաստաթղթերը, նրանց ինքնակենսագրությունը, գնահատման արդյունքները չհամարել անձնական գաղտնիք՝ որպիսի պահանջը սահմանված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով: Նշված դրույթի համաձայն՝ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական անձանց անձնական և ընտանեկան, ինչպես նաև իրավաբանական անձանց՝ առևտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը: Փաստորեն՝ դատախազությունը, նշելով, որ որևէ իրավական ակտով սահմանված չէ, որ հավակնորդների ներկայացրած փաստաթղթերը, նրանց կենսագրությունը, գնահատման արդյունքները չեն համարվում անձնական գաղտնիք, եզրակացրել է, որ, ուրեմն, դրանք անձնական

գաղտնիք պարունակող տեղեկություններ են. հետևաբար՝ չեն կարող տրամադրվել ԻԵՄ-ին: Ուստի ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ՀՀ գլխավոր դատախազությունը նշել է, որ չի կարող տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

2.3. Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով 2016թ. հունվարին անցկացված բաց մրցույթը.

- 2.3.1. 2015թ. դեկտեմբերի 22-ին «ԻԵՄ» իհկ-ն դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով հնարավորություն տալ իր դիտորդական առաքելության շրջանակներում դիտարկել 2016թ. հունվարին դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվելիք բաց մրցույթը: Միևնույն ժամանակ, կազմակերպության նախագահը խնդրել է տրամադրել տեղեկատվություն ՀՀ գլխավոր դատախազությունում 2016թ. հունվարին դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվելիք մրցույթի ժամանակացույցի վերաբերյալ, մասնավորապես՝ տեղեկացնել, թե հունվար ամսվա կոնկրետ որ օրերին է անց կացվելու մրցույթը:
- 2.3.2. 2016թ. հունվարի 14-ին ստացվել է ՀՀ դատախազության պատասխանը, որով տեղեկացվել է, որ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով մրցույթն անց է կացվելու 2016թ. հունվարի 18-ին, 20-ին, 22-ին, 25-ին, 27-ին և 29-ին: Միևնույն ժամանակ, հղում անելով ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունվարի 29-ի թիվ 8 հրամանով սահմանված «Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման կարգին»՝ նշվել է, որ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով մրցույթին մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներից բացի կարող են ներկա գտնվել միայն հրավիրված դիտորդներ, ինչպիսին ԻԵՄ-ը չի հանդիսանում:
- 2.3.3. Նույն օրը, հունվարի 14-ին, «ԻԵՄ-ը մեկ այլ դիմում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն (ինչպես էլեկտրոնային եղանակով, այնպես էլ առձեռն մուտք անելու միջոցով)՝ առաջարկելով դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով սույն թվականի հունվարի 18-ին, 20-ին, 22-ին, 25-ին, 27-ին և 29-ին անցկացվելիք մրցույթին ԻԵՄ-ին հրավիրել դիտորդություն իրականացնելու: Առաջարկը մերժելու դեպքում խնդրել ենք ներկայացնել այս և մյուս մրցույթներին ԻԵՄ-ին որպես դիտորդ չհրավիրելու պատճառները: Խնդրել ենք նաև տեղեկացնել՝ արդյոք կան մրցույթին որպես դիտորդ հրավիրված կազմակերպություններ. եթե այո, ապա՝ որոնք:
- 2.3.4. Դատախազությունից այդպես էլ պատասխան չստանալով՝ ԻԵՄ-ի ներկայացուցիչները սույն թվականի հունվարի 29-ին գնացել են ՀՀ գլխավոր դատախազության շենք: Անցագրային կետում նրանց չեն թույլատրել բարձրանալ մրցույթային դահլիճ: Փոխանցել են, որ մրցույթը դիտարկելու հարցով անհրաժեշտ է դիմել Դատախազության անձնակազմի կառավարման բաժին: ԻԵՄ-ի ներկայացուցիչներին ուղեկցել են Գլխավոր դատախազության ընդունարան,

որտեղից վերջիններս գանգել են անձնակազմի կառավարման բաժին: Բաժնի աշխատակիցը հաղորդել է, որ ԻԵՄ-ի ներկայացուցիչների՝ մրցույթը դիտարկելու հարցը իրավասու է լուծել միայն բաժնի պետը, իսկ վերջինս գտնվում է մրցութային դահլիճում և չի կարող ընդունել ԻԵՄ-ի ներկայացուցիչներին և նրանց մրցույթը դիտարկելու հնարավորություն տալ:

- 2.3.5. ԻԵՄ-ի ներկայացուցիչները ցանկացել են դիմում հանձնել մրցութային հանձնաժողովի նախագահին՝ խնդրելով հնարավորություն ընձեռել դիտարկելու մրցույթը: Նրանց դիմումը, սակայն, հրաժարվել են ընդունել: Անձնակազմի կառավարման բաժնի աշխատակիցն ասել է, որ իրավասու չէ ընդունել դիմումը, առաջարկել է դիմումը հանձնել ՀՀ դատախազության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժին, սակայն այս բաժնից նույնպես հրաժարվել են առձեռն ընդունել ԻԵՄ-ի ներկայացուցիչների դիմումը՝ ասելով, որ իրավասու չեն առձեռն ընդունելու: Առաջարկել են դիմումը գցել ՀՀ դատախազության շենքում տեղադրված դիմումների համար նախատեսված արկղի մեջ: Հունվարի 29-ին, ժամը 14:14-ին ԻԵՄ դիտորդներն իրենց դիմումը գցել են դատախազության դիմումների արկղի մեջ: Նույն դիմումը նույն օրն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն նաև էլեկտրոնային եղանակով և փոստային ծառայության միջոցով: Դատախազությունից առայսօր պատասխան չի ստացվել:
- 2.3.6. 2016թ.փետրվարի 5-ին ԻԵՄ-ը հարցում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ նույն թվականի հունվարի 18-29 ընկած ժամանակահատվածում դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված բաց մրցույթին մասնակցելու համար դիմած, մասնակցած և հաղթած անձանց թվի վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել հաղթողների ինքնակենսագրությունը և նրանց վերաբերյալ կատարված քվեարկության արդյունքները:
- 2.3.7. 2016թ. մարտի 12-ին ստացվել է դատախազության պատասխանը, որում վերջինս հրաժարվել է տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված անձանց կենսագրական տվյալները և գնահատման արդյունքները: Դատախազությունը, սակայն տրամադրել է մրցույթին մասնակցելու համար դիմած, մասնակցած և հաղթած անձանց թվի վերաբերյալ տեղեկատվություն, ինչը հրաժարվել էր անել 2015թ. մրցույթի վերաբերյալ նույնաբովանդակ հարցմանն ի պատասխան: Հետևաբար՝ դատախազությունը կամայական մոտեցում է ցուցաբերում՝ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, ըստ որի՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:
- 2.3.8. Ըստ տրամադրված տեղեկատվության՝ դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված բաց մրցույթին մասնակցելու համար դիմել է 68 անձ, մրցույթին մասնակցել՝ 64-ը, որոնցից 16-ի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն: Դատախազությունը, սակայն չի հստակեցրել, թե նշված 16 հավակնորդից քանիսն են գլխավոր դատախազի կողմից ընդգրկվել դատախազների թեկնածությունների ցուցակում:

2.4. ՀՀ գլխավոր դատախազության գործողությունների բողոքարկում

- 2.4.1. Հաշվի առնելով դիտորդական առաքելության իրականացման ընթացքում իր առջև ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստեղծված խոչընդոտները՝ ԻԵՄ-ը երկու հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան: Առաջին հայցը ներկայացվել է 2015թ. ապրիլի 13-ին՝ խնդրելով պարտավորեցնել դատախազությանը, որպեսզի վերջինս թույլատրի դիտորդական առաքելություն իրականացնող ԻԵՄ-ին մասնակցելու դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին, ինչպես նաև՝ պարտավորեցնել տրամադրել անցկացված մրցույթի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը: Ներկայացված հայցադիմումը դատարանի վարույթ է ընդունվել միայն տեղեկատվության տրամադրման պահանջի մասով: Դիտորդություն անելու թույլտվություն տալուն պարտավորեցնելու մասով դատարանը գտել է, որ քանզի խնդրո առարկա բաց մրցույթն անց է կացվել 2015թ. հունվար ամսին, ապա հայցվող գործողությունն արդեն իսկ սպառված է: Այս արգելքի իրավաչափությունը վիճարկելու նպատակով ԻԵՄ-ը պատրաստվում է ճանաչման հայցատեսակով դիմել Վարչական դատարան: Երկրորդ հայցադիմումը ներկայացվել է 2016թ. փետրվարի 15-ին: Հայցապահանջն է ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ գլխավոր դատախազության՝ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին ԻԵՄ-ի մասնակցությունը չթույլատրելուն ուղղված գործողությունները/անգործությունը: Ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցվել է երկու վարչական գործ՝ ՎԴ/1276/05/15 և, համապատասխանաբար՝ ՎԴ/0818/05/2016: Առաջինի կապակցությամբ Վարչական դատարանը, դատավոր Ա. Դիլանյանի նախագահությամբ, 2016թ. ապրիլի 6-ին կայացրել է վճիռ, որով ԻԵՄ-ի հայցն ամբողջությամբ մերժվել է: Երկրորդ դատական գործը դեռ ընթացքի մեջ է:
- 2.4.2. ՎԴ/1276/05/15 վարչական գործով կայացրած իր վճռում դատարանը գտել է. «... վերոնշյալ տեղեկությունները հանդիսանում են անձնական կյանքի գաղտնիությանը վերաբերող տեղեկություններ և պատասխանողն իրավասու չէր դրանք հայցվորին տրամադրել»:
- 2.4.3. Վարչական դատարանը հղում է արել ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասին, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք: ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին մասը մեջբերելով՝ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:
- 2.4.4. Հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին՝ դատարանը փաստել է, որ տեղեկատվություն տրամադրողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Վերոգրյալի հիման վրա դատարանը եզրակացրել է, որ տեղեկատվություն փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը դասվում է անձի հիմնական իրավունքների շարքին: Սահմանադրական այս իրավունքը, սակայն, ըստ

դատարանի, բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով պայմանավորված հիմքերով: Այս սահմանադրական արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների, մասնավորապես, անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության, իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունքի հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը: Դատարանը հղում է արել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, որի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, ի թիվս այլնի նաև այն դեպքում, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը:

2.4.5. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ դատարանը եզրակացրել է, որ հավակնորդների ինքնակենսագրությունը, ինչպես նաև յուրաքանչյուր հավակնորդի գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելով պատասխանողը կխախտեր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը, քանի որ այդ տեղեկություններն իրենց բնույթով հանդիսանում են պաշտպանության ենթակա, անձնական կյանքի գաղտնիությանը վերաբերող տեղեկություններ: Հետևաբար, ըստ դատարանի՝ իրավաչափ են եղել այդ տեղեկությունները ԻԵՄ-ին չտրամադրելու վերաբերյալ դատախազության գործողությունները: Իսկ մասնագետ դատախազական կադրեր ունենալու՝ հանրային շահը և այդ կադրերի ընտրության և նշանակման գործընթացների մասին հանրության տեղեկատվություն ստանալու կարևորությունը դատարանին առանձնապես չի հետաքրքրել, քանի որ վերջինս հարկ չի էլ համարել քննարկել, թե արդյոք այդ տեղեկատվության հայցումն ու ստացումը բխել է հանրային շահից, թե՛ ոչ:

2.4.6. Վարչական դատարանը չի կիրառել եռաստիճանը թեստը՝ պարզելու համար ԻԵՄ-ի արտահայտվելու ազատության իրավունքին՝ դատախազության միջամտության իրավաչափության հարցը: Այնինչ՝ եռաստիճան այս թեստը դատախազության գործողությունների նկատմամբ կիրառելիս ակնհայտ է դառնում, որ միջամտությունը ԻԵՄ-ի արտահայտվելու ազատության իրավունքին.

- **Սահմանված չէ օրենքով,**

- **Անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում:**

2.4.7. Միջամտությունը սահմանված չէ օրենքով, քանի որ չկան օրենքով սահմանված այնպիսի սահմանափակումներ պարունակող կարգավորումներ, որոնց հիման վրա հնարավոր է սահմանափակել պահանջված տեղեկատվության և փաստաթղթերի տրամադրումը: Իսկ պատասխանողի այն հիմնավորումները, ըստ որոնց՝ փնտրվող տեղեկությունները չեն կարող տրամադրվել՝ դրանց հրապարակման ենթակա տեղեկություններ չլինելու հանգամանքով պայմանավորված, պարզապես անհիմն են:

Անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածին հարկ է նշել, որ տվյալ պարագայում հասարակական միավորումների ներկայացուցիչներին տեղեկությունների տրամադրման համար սահմանված չեն որևէ

սահմանափակումներ, հետևաբար, ԻԵՄ-ի տեղեկատվության տրամադրման սահմանափակումը չի կարող սահմանափակվել, քանի որ նման հիմք նախատեսված չէ օրենքով:

Ավելին՝ դատախազության գործունեության սկզբունքներից է թափանցիկությունը և հրապարակայնությունը, այսինքն՝ թափանցիկությունը և հրապարակայնությունը ապահովելու համար չպետք է սահմանափակվելին հայցվող տեղեկատվության տրամադրումը և դիտորդական առաքելության իրականացումը:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենքով սահմանված չեն տեղեկատվության տրամադրման և դիտորդական առաքելության իրականացման սահմանափակման որևէ հիմք: Օրենքով համապատասխան հիմքերի բացակայության պայմաններում՝ դատախազության գործողությունները և վարչական ակտը ակնհայտորեն ոչ իրավաչափ են:

- 2.4.8. **Միջամտությունն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում**, քանի որ դատախազների թեկնածուների ընտրության նման կարևոր հանրային նշանակության գործընթացում պահանջվող տեղեկատվության հրապարակայնությունն է բխում ճնշող հասարակական կարիքից, այլ ոչ թե հայցվող տեղեկատվության գաղտնիությունն ապահովելը: Հետևաբար ԻԵՄ-ի իրավունքների սահմանափակումը համաչափ չէ հետապնդող նպատակին, որն էլ իր հերթին իրավաչափ չէ, իսկ սահմանափակման անհրաժեշտությունը և համաչափությունը հիմնավորված չեն:

2.5. Առաջարկություններ ՀՀ դատախազության մասին օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

- 2.5.1. Մրցույթների վերաբերյալ հայտարարությունների հրապարակում ՀՀ Գլխավոր դատախազության պաշտոնական կայքէջում,
- 2.5.2. Մրցութային հանձնաժողովի ձևավորման, անդամների առաջադրման, ինչպես նաև կազմի պարբերական թարմացման վերաբերյալ ավելի ճկուն և մանրամասն կարգավորումների նախատեսում, որոնք կերաշխավորեն նաև այդ հանձնաժողովի անկախությունը և հանձնաժողովի կազմում քաղաքացիական հասարակության ներգրավումը,
- 2.5.3. Մրցույթների ընթացքում նաև անձնական հատկանիշների ստուգման չափորոշիչներ և կարգ՝ այդ ստուգումն իրական և արդյունավետ դարձնելու նպատակով,
- 2.5.4. Մրցույթի ընթացքի՝ թե հանձնաժողովի կողմից թե հավակնորդի կողմից արձանագրման և/կամ ձայնագրառման անհրաժեշտություն, որը պայմանավորված է նաև արդյունքների բողոքարկման իրավունքի ապահովմամբ,
- 2.5.5. Մրցույթի արդյունքների բողոքարկման ընթացակարգի հստակ ամրագրում, ներառյալ՝ բողոքարկման ասյանները, ժամկետները և այլ էական հարցեր,
- 2.5.6. Օրենքով դիտորդների և ԶԼՄ-ների գործունեության համար իրական երաշխիքների սահմանում, որպեսզի սահմանափակվի վարչական մարմնի հայեցողությունն ու կամայականությունը հանրային այսպիսի կարևորության

իրադարձության կապակցությամբ հանրային հսկողության սահմանափակման հարցում:

- 2.5.7. Մրցութային բոլոր փաստաթղթերի, այդ թվում՝ այն անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերի, որոնք մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել, հրապարակայնության հստակ ամրագրում, ինչը կնպաստի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների ապահովմանը. Ավելին՝ այդ փաստաթղթերը Գլխավոր դատախազության կայքէջում հրապարակելու պարտականության նախատեսում,
- 2.5.8. Դիտորդների և զլմ-ների համար մրցույթների դիտարկման ընթացքում ձայնագրառում, լուսանկարահանում և/կամ տեսանկարահանում իրականացնելու իրավունքի սահմանում՝ հնարավորինս մեծ հրապարակայնություն ապահովելու նպատակով:

3. Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով 2015թ. հունիսի 26-ին և 2016թ. հունվարի 26-ին անցկացված մրցույթները

2015թ. հունիսի 26-ին և 2016թ. հունվարի 26-ին ՀՀ քննչական կոմիտեն կազմակերպել և անց է կացրել կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակ հետապնդող մրցույթ: ԻԵՄ-ը մեկ դիտորդի կազմով դիտարկել է երկու մրցույթներն էլ, սակայն դիտարկման գործընթացն առանց խոչընդոտների չի ընթացել:

3.1. ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի ձևավորման հիմքում ընկած ներպետական օրենսդրությունը.

3.1.1. Քննչական կոմիտեում քննչական ծառայողների թեկնածությունների ցուցակի կազմման գործընթացները կարգավորվում են «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով և «ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2014թ. դեկտեմբերի 27-ի թիվ 18-Լ հրամանով:

3.1.2. «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանում դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած ՀՀ այն քաղաքացին, ով.

- Անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ տարկետում ստացած) կամ պահեստագործի սպա է,
- Տիրապետում է հայերենին,
- Չունի քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն (որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը):

3.1.3. Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Քննչական կոմիտեում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին.

- Ով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- Ով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից,
- Ով դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից,
- Ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում,
- Ում նկատմամբ առկա է ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

3.1.4. Քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը 60 տարեկանն է: Սահմանային տարիքը լրանալուց հետո քննչական կոմիտեի նախագահը կարող է մինչև 5 տարի ժամկետով երկարաձգել ծառայության ժամկետը:

- 3.1.5. Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրում է Քննչական կոմիտեում գործող Որակավորման հանձնաժողովը, որը բաղկացած է 9 անդամից: «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ որակավորման հանձնաժողովի կազմում են քննչական կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը, քննչական կոմիտեի 4 ծառայող և 4 իրավաբան-գիտնական: Որակավորման հանձնաժողովի անդամներին նշանակում է քննչական կոմիտեի նախագահը՝ 3 տարի ժամկետով: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է քննչական կոմիտեի նախագահի տեղակալը:
- 3.1.6. Փաստորեն Քննչական կոմիտեում նույնպես, ինչպես ՀՀ գլխավոր դատախազության դեպքում էր, Որակավորման հանձնաժողովի բոլոր անդամները նշանակվում են կոմիտեի նախագահի կողմից: Այս հանգամանքը լրջորեն վտանգում է անցկացվող մրցույթի անկախությունն ու անաչառությունը:
- 3.1.7. Որակավորման հանձնաժողովը տարին մեկ անգամ, որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվարին համալրում է քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը: Քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների լրացուցիչ որակավորման ստուգում:
- 3.1.8. Որակավորման հանձնաժողովը քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտերի ընդունման մասին առնվազն մեկ ամիս առաջ առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում, հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) և քննչական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է հայտարարություն՝ որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների ընդունման ժամկետները, վայրը, որակավորման գրավոր քննության օրը, համալրման ենթակա տեղերի քանակը:
- 3.1.9. Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը ներկայացնում է՝
- Անձը հաստատող փաստաթուղթ,
 - Բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթուղթ,
 - Կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իրավաբանի մասնագիտություն ձեռք բերելուց հետո մասնագիտական իրավաբանական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցներ (այդ թվում՝ պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են մասնագիտական իրավաբանական ստաժ դիտարկվող աշխատանքում աշխատանքային պարտականությունները),
 - Պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ (եթե արական սեռի հավակնորդ է),
 - Քննչական կոմիտեում ծառայությանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ:

- 3.1.10. Քննչական կոմիտեում քննչական ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով մրցույթն անց է կացվում գրավոր ձևով: Որակավորման հանձնաժողովն ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական ունակությունները, ինչպես նաև նրա ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքով նախատեսված այլ պահանջներին:
- 3.1.11. Որակավորման գրավոր քննության հարցաշարը կազմվում է նախօրոք, հաստատվում է Կոմիտեի նախագահի կողմից և քննությունից առնվազն մեկ ամիս առաջ հրապարակվում Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում: Հարցաշարը բաղկացած է երեք հարյուր հարցից, որոնք ընդգրկում են հետևյալ բնագավառները`
- ՀՀ Սահմանադրություն` հիսուն հարց,
 - ՀՀ քրեական դատավարություն` հարյուր հարց,
 - ՀՀ քրեական իրավունք` հարյուր հիսուն հարց:
- 3.1.12. Ըստ «ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2014թ. դեկտեմբերի 27-ի թիվ 18-Լ հրամանի 18-րդ կետի` որակավորման հանձնաժողովը, մինչև գրավոր քննությունը, համակարգչում զետեղված կամ թղթային տարբերակով կազմված հարցաշարից, պատահական ընտրությամբ, ընտրում է գրավոր քննություն անցկացնելու համար հարցեր և կազմում հայտատուների քանակին համապատասխան հարցատոմսեր` հետևյալ չափաբաժիններով.
- ՀՀ Սահմանադրություն` մեկ հարց,
 - ՀՀ քրեական դատավարություն` մեկ հարց,
 - ՀՀ քրեական իրավունք` մեկ հարց:
- 3.1.13. Վերոնշյալի կապակցությամբ անհրաժեշտ է արձանագրել, որ հիշյալ երեք ոլորտներից մեկական հարցերով քննությունն ի զօրու չէ ապահովելու մասնակիցների լիարժեք և արդյունավետ ստուգում հանրային կարևորության նման կարևոր պաշտոնին համապատասխանելու առումով:
- 3.1.14. Գրավոր քննությունն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում, որն ապահովված է համապատասխան պայմաններով: Քննության մասնակիցներին արգելվում է քննասենյակ բերել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր, կապի միջոցներ կամ այլ տեխնիկական սարքեր: Քննության տևողությունը երկու ժամ է:
- 3.1.15. «ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2014թ. դեկտեմբերի 27-ի թիվ 18-Լ հրամանի 26-րդ կետի համաձայն` մինչև քննության սկիզբը յուրաքանչյուր հավակնորդ հանձնաժողովի քարտուղարից ստանում է ծրար, որը պարունակում է`
- Հարցատոմս,
 - Հանձնաժողովի կողմից դրոշմված, ծածկագրված տետր,
 - Գրիչ:

- 3.1.16. Աշխատանքն ավարտելուց կամ գրավոր քննության համար հատկացված ժամանակն սպառվելուց հետո մասնակիցը հանձնաժողովի քարտուղարին է հանձնում ծածկագրված տետրը և ծրարը: Քարտուղարն աշխատանքը պատճենահանելուց հետո պատճենը հանձնում է մասնակցին, իսկ ծրարավորված բնօրինակը՝ հանձնաժողովի նախագահին:
- 3.1.17. Հանձնաժողովը գրավոր աշխատանքը ստուգելիս գնահատում է հավակնորդի մասնագիտական պատրաստվածությունը: Ստուգված գրավոր աշխատանքը պետք է պարունակի դրանցում առկա թերությունների վերաբերյալ ստուգողների կատարած համապատասխան նշումները, որոնք հնարավորություն կտան եզրահանգումներ անելու գնահատման հիմքում ընկած հանգամանքների մասին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ծանոթանալու ստուգված գրավոր աշխատանքին և ներկայացնելու իր նկատառումները: Փաստորեն, չի հստակեցվում, թե յուրաքանչյուր գրավոր աշխատանք հանձնաժողովի քանի անդամի կազմով է ստուգվում, արդյո՞ք հանձնաժողովի բոլոր անդամները ստուգում են բոլոր գրավոր աշխատանքները, թե՞ յուրաքանչյուր անդամ ստուգում է ինչ-որ կոնկրետ թվով աշխատանքներ: Չի հստակեցվում նաև, թե ինչպես է որոշվում, թե հանձնաժողովի որ անդամը որ աշխատանքներն է ստուգում:
- 3.1.18. Հարցատումը գնահատվում է յոթանասունհինգ բալային համակարգով: Հարցատումի յուրաքանչյուր հարցի պատասխանը գնահատվում է առավելագույնը քսանհինգ միավոր: Գրավոր աշխատանքը գնահատվում է զրո միավոր, եթե այն ներկայացվել է չծածկագրված, չորոշմավորված տետրով, այլ գրիչով գրված կամ այլ անհատականացնող նշումներով:
- 3.1.19. Որակավորման գրավոր քննության արդյունքները հրապարակվում են մինչև անցկացման օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրը:
 «ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2014թ. դեկտեմբերի 27-ի թիվ 18-Լ հրամանի 38-րդ կետի համաձայն՝ քննչական կոմիտեի քննչական ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված գրավոր քննության արդյունքները՝ յուրաքանչյուր առաջադրանքի համար ստացած գնահատականը և հավակնորդների հանրագումարային միավորները, հրապարակվում են Հանձնաժողովի նախագահի կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի անդամի կողմից:
- 3.1.20. Քննության արդյունքների հրապարակման եղանակները չեն հստակեցվում: Հրապարակել ասելով՝ կարող ենք հասկանալ հասարակությանը հասանելի դարձնել, ինչը, սակայն, չի արվում Քննչական կոմիտեի կողմից: Ավելին, Քննչական կոմիտեն քանիցս հրաժարվել է տեղեկատվություն տրամադրել մրցույթի արդյունքների վերաբերյալ ԻԵՄ-ի հարցումներով:
- 3.1.21. Հանձնաժողովի դրական եզրակացությունն են ստանում գրավոր քննության արդյունքում անցողիկ հիսուն և ավելի առավելագույն միավորներ հավաքած հայտատուները՝ համալրման ենթակա տեղերի քանակին համապատասխան: Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ընդգրկվում են քննչական

կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում: Որակավորման հանձնաժողովի ընդունած որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան՝ որոշումն ստանալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում: Դատարանը գործը քննում և լուծում է այն ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.22. Քննչական ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման օրվան հաջորդող եռօրյա ժամկետում ցուցակը ներկայացվում է արդարադատության ակադեմիա: Ցուցակում ընդգրկված անձինք արդարադատության ակադեմիայում ուսումնառության ծրագիր են անցնում և հանձնում որակավորման քննություն:

3.1.23. Անձն ազատվում է ուսումնառության դասընթացներից և որակավորման քննություն հանձնելուց, եթե՝

- Ունի դատախազի, դատավորի, քննիչի կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի կամ,
- Իրավաբանական գիտությունների դոկտոր է կամ,
- Իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի 5 տարվա ստաժ:

3.1.24. Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձի միջնորդությամբ որակավորման հանձնաժողովը կարող է քննության առնել հայտատուին միաժամանակ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու հարցը:

3.1.25. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների, վարչությունների և բաժինների, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունների, բաժինների և կայազորային քննչական բաժինների (բաժանմունքների), Երևան քաղաքի քննչական վարչության, Երևան քաղաքի վարչական շրջանների քննչական բաժինների, մարզային քննչական վարչությունների բաժինների (բաժանմունքների) կազմում գործող քննիչներին պաշտոնի է նշանակում քննչական կոմիտեի նախագահը քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված այն անձանց թվից, ովքեր, ավարտելով ուսումնառությունն արդարադատության ակադեմիայում, հաջողությամբ հանձնել են որակավորման քննությունը կամ օրենքով սահմանված կարգով ազատված են եղել արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը քննչական կոմիտեի նախագահի կողմից հանվում է քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակից:

3.2. Քննչական ծառայողների թեկնածությունների ցուցակը համայրելու նպատակով 2015թ. հունիսի 26-ին անցկացված քննությունը և թափանցիկության ու հրապարակայնության խնդիրներ, որակավորման հանձնաժողովի գործունեությունն ու անկախությունը.

3.2.1. 2015թ. մայիսի 29-ին ԻԵՄ-ը դիմել է ՀՀ քննչական կոմիտեի՝ խնդրելով հնարավորություն ընձեռել դիտարկելու Քննչական կոմիտեի քննչական ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով նույն

- թվականի հունիսի 26-ին անցկացվելիք մրցույթը: Օրեր անց քննչական կոմիտեից հեռախոսազանգի միջոցով խնդրել են հստակեցնել այն դիտորդների կազմը, որոնք մտադիր են դիտարկել անցկացվելիք մրցույթը: Այնուհետև՝ Քննչական կոմիտեից զանգահարել են ԻԵՄ-ի նախագահին և տեղեկացրել որ Որակավորման հանձնաժողովի նախագահ Արամ Թամազյանը, որը միննույն ժամանակ հանդիսանում է Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը և որակավորման հանձնաժողովի նախագահը, հրավիրում է նրան հանդիպման: 2015թ. հունիսի 9-ին հանդիպումը կայացել է: Հանդիպման գնացած ԻԵՄ ներկայացուցիչները՝ հկ նախագահ Լուսինե Հակոբյանն ու ավագ իրավախորհրդատու Տիգրան Եգորյանը, նախ, ստիպված են եղել սպասել, քանզի պարոն Թամազյանն այդ ընթացքում զբաղված էր իր աշխատասենյակում դերձակին ընդունելով: Մոտ տասնհինգ րոպե անց ԻԵՄ ներկայացուցիչները ներս են հրավիրվել: Հանդիպման ժամանակ հանձնաժողովի նախագահը փորձել է պարզել դիտարկման նպատակները, եղանակները և այլ մանրամասներ: Ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն, ըստ որի՝ հունիսի 26-ին անցկացվելիք մրցույթին ԻԵՄ-ը կարող է իրականացնել իր դիտորդական առաքելությունը 3-4 դիտորդի կազմով:
- 3.2.2. 2015թ. հունիսի 22-ին ստացվել է քննչական կոմիտեի 17.06.2015թ. գրությունը, որում Քննչական կոմիտեն նշել է, որ Որակավորման հանձնաժողովը միաձայն որոշել է թույլ տալ ԻԵՄ-ի ներկայացուցչին ներկա գտնվելու 26.06.2015թ. անցկացվելիք որակավորման քննությանը: Հաշվի առնելով բանավոր պայմանավորվածությունը՝ ԻԵՄ-ի 4 ներկայացուցիչներ հունիսի 26-ին ներկայացել են Քննչական կոմիտեի համապատասխան մասնաշենք, որտեղ, սակայն, նրանց տեղեկացրել են, որ մրցութային դահլիճ կարող է բարձրանալ միայն 1 ներկայացուցիչ: Այսպես, 2015թ. հունիսի 26-ի մրցույթի դիտարկումն իրականացրել է ԻԵՄ ավագ իրավախորհրդատու Տիգրան Եգորյանը: Մրցույթի ընթացքում Որակավորման հանձնաժողովի անդամները, խոչընդոտելով Եգորյանի դիտորդական լիազորություններին, չեն թույլատրել վերջինիս ծանոթանալ մրցութային փաստաթղթերին, հավակնորդների գրանցման ցուցակին, հավակնորդների կողմից գրված աշխատանքներին: Փորձել են նաև չթույլատրել ձայնագրառել մրցույթի ընթացքը: Հանձնաժողովի անդամներից մեկը նույնիսկ փորձել է վերցնել դիտորդից իր ձայնագրիչ սարքը:
- 3.2.3. Եվս մեկ միջադեպ է արձանագրվել հանձնաժողովի անդամ Հրայր Ղուկասյանի հետ, որը մոտենալով հանձնաժողովի նախագահին խնդրել է թույլատրել իրեն դիտորդ Տիգրան Եգորյանին դուրս հանել սենյակից, սակայն հանձնաժողովի նախագահի ողջամտությունը գերակայել է: Հանձնաժողովի որոշ այլ անդամներ, մասնավորապես՝ Ստեփան Ծաղիկյանը, տարբեր հարցերով առաջացող Տիգրան Եգորյանի հետ հաղորդակցության ընթացքում պահանջում էր անջատել ձայնագրիչը և պարբերաբար դիմում էր հանձնաժողովի նախագահին ինչ-որ միջոց ձեռնարկելու պահանջով ընդհուպ մինչև դիտորդի հեռացումը:
- 3.2.4. Վերոնշյալ դեպքերը ուղղակի ցուցիչ են այն իրողության, որ հանձնաժողովն իրականում անկախ չէ և հիմնականում գործում է բացառապես դրա նախագահի հայեցողությամբ և առանձին անդամներ չունեն բավարար ազատություն և անկախություն նույնիսկ ինքնուրույն հարցերի քննարկում առաջադրելու

հանձնաժողովին և տարբեր հարցերի լուծումը կախված է նախագահի միանձնյա որոշումից:

- 3.2.5. Տիգրան Եգորյանին հաջողվել է պարզել, որ մրցույթին մասնակցելու նպատակով դիմել է 41 հավակնորդ, որոնցից միայն 35-ն են ներկայացել որակավորման գրավոր քննությանը: Հանձնաժողովը նրանց մեծ մասին չի տրամադրել նրանց գրավոր աշխատանքների պատճենները, ինչը հանդիսանում է ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի գործունեության կարգի պահանջների խախտում: Պատճեն տրամադրվել է հավակնորդներից միայն մի քանիսին՝ միայն նրանց կողմից համապատասխան պահանջ ներկայացնելուց հետո: Հիմնականում հանձնաժողովի նախագահի կողմից հավակնորդներին հարց էր ուղղվում այն մասին, թե արդյոք նրանք ցանկանում են ստանալ իրենց գրավորների պատճենները, սակայն հարցի տոնայնությունն այնպիսին էր, որ հուշում էր հավակնորդներին հրաժարվել այդպիսի պահանջից:
- 3.2.6. Ավելին, հանձնաժողովի նախագահի կողմից ավելորդ և ցուցադրական եղանակով հարցադրումներ էին ուղղվում հավակնորդներին մրցույթի թափանցիկության և արդարության վերաբերյալ՝ շեշտելով, որ ներկա է դիտորդ և ցանկալի է, որ հենց հավակնորդները հայտնեն այն մասին, որ մրցույթի պայմանները բավարարում են իրենց: Բնականաբար չեղավ գեթ մեկ հավակնորդ որ չշռայլեր հատուկ գովեստի խոսքեր մրցույթի կազմակերպիչների հասցեին:
- 3.2.7. Հարկ է նշել, որ 2015թ. հունիսի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացված մրցույթին բացի Տիգրան Եգորյանից ներկա է եղել ևս 1 դիտորդ՝ Վանյա Վարդանի Հարությունյանը, «Կոռուպցիայի կանխարգելմանն աջակցող հասարակական կենտրոն» հասարակական կազմակերպությունից: Վերջինս տեղեկացրել է, որ որպես դիտորդ հրավիրվել է քննչական կոմիտեի կողմից, սակայն քիչ անց, նկատողություն ստանալով հանձնաժողովի նախագահի կողմից, հերքել է իր իսկ խոսքերը:
- 3.2.8. 2015թ. հուլիս 9-ին ԻԵՄ-ը դիմել է ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովին՝ խնդրելով տրամադրել ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի բոլոր նիստերի արձանագրությունները, այդ թվում՝ 2015թ. հունիսի 16-ի նիստի արձանագրությունը (որի ընթացքում որակավորման հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել առ այն, որ 2015թ. հունիսի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվելիք լրացուցիչ քննությանը դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել ԻԵՄ-ի միայն մեկ դիտորդ), գրավոր քննության քննական տարբերակները, հարցատոմսերի քանակը, հավակնորդների կողմից գրված թեստերի ստուգված տարբերակների պատճենները, գրավոր աշխատանքներն ստուգող անձանց տվյալները (անուն, ազգանուն):
- 3.2.9. 2015թ. հուլիսի 24-ին ՀՀ քննչական կոմիտեի կողմից ստացվել է պատասխան, որի համաձայն՝ Քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովը 2015թ. հուլիսի 20-ի նիստում քննարկել է ԻԵՄ-ի հուլիսի 9-ի դիմումը և միաձայն որոշել մերժել այն: Ըստ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ հոդվածներով և «Տեղեկատվության

ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 9-րդ հոդվածի 7-րդ կետերով ԻԵՄ-ին վերապահված է տեղեկատվություն, այլ ոչ թե տեղեկատվության հիմքեր ստանալու իրավունք, և որ քննությունների վերաբերյալ տեղեկատվությունը դեռևս չի նշանակում նիստերի արձանագրությունների, հավակնորդների կողմից գրված թեստերի ստուգված տարբերակների և գրված աշխատանքներն ստուգող անձանց տվյալների տրամադրում: Այլ կերպ ասած՝ քննչական կոմիտեն ասում է, որ հանրային հսկիչները պետք է բավարարվեն իրենց կողմից հրապարակված այն տեղեկատվությամբ, թե քանի հավակնորդ է մասնակցել մրցույթին, քանիսն է հաջողությամբ այն հաղթահարել: Ինչ վերաբերում է այդ ամբողջ գործընթացի օբյեկտիվության և արդարության ստուգմանը, ապա դրա հնարավորությունը չի ընձեռնվելու:

- 3.2.10. Հղում կատարելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետին՝ հանձնաժողովը եզրակացրել է, որ հայցված տեղեկատվության տրամադրումը կհակասի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքին:
- 3.2.11. Սրանով ՀՀ քննչական կոմիտեն խախտել է ՀՀ Սահմանադրությամբ, ՄԻԵԿ-ով և օրենքներով սահմանված մի շարք սկզբունքներ և իրավունքներ: Մասնավորապես խախտվել է. ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, 51-րդ հոդվածները, ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը:
- 3.2.12. ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի սահմանափակման հիմքերը նախատեսված են նույն հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 42-րդ հոդվածով ամրագրված իրավունքը կարող է. «... սահմանափակվել միայն օրենքով, պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարոյականության կամ այլոց պատվի եւ բարի համբավի և հիմնարար իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով»:
- 3.2.13. ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով նախատեսված տեղեկություններ ստանալու իրավունքը, համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի, կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3.3. Քննչական ծառայողների թեկնածությունների ցուցակը համայրելու նպատակով 2015թ. հունիսի 26-ին անցկացված քննությունը.

- 3.3.1. Դեռևս 2015 թ. նոյեմբերի 4-ին ԻԵՄ-ը 2016 թ. հունվարի 26-ին տեղի ունենալիք մրցույթի գրավոր փուլը դիտարկելու նպատակով դիմում էր ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեին: Ի պատասխան ԻԵՄ-ի դիմումի՝ քննչական կոմիտեն տեղեկացրել էր, որ ԻԵՄ-ի՝ դիտորդություն իրականացնելու հարցը կքննարկվի որակավորման հանձնաժողովի առաջիկա նիստին, նաև խնդրել էր կազմակերպությանը հայտնել՝ արդյո՞ք կազմակերպությունը դիտարկել է

պետական պաշտոնյաների ընտրություններ, և եթե այո, ապա որոնք: ԻԵՄ-ը թվել էր իր դիտարկած մրցույթները:

3.3.2. Մրցույթից մեկ օր առաջ, 2016 թ. հունվարի 25-ին, ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի քարտուղար Հասմիկ Կիրակոսյանը ԻԵՄ-ի նախագահ Լուսինե Հակոբյանին հեռախոսազանգով հայտնել էր, որ հունվարի 26-ին տեղի ունենալիք գրավոր քննությանը կարող է ներկայանալ ԻԵՄ-ի մեկ դիտորդ, բայց ոչ՝ Տիգրան Եգորյանը: Հունվարի 26-ին առավոտյան ժամը 10:00-ին, ԻԵՄ-ի ներկայացուցիչներ Տիգրան Եգորյանը և Սերգեյ Գրիգորյանը ժամանել են ՀՀ ՊՆ քննչական վարչության շենք, անցագրային կետում ներկայացրել են անձը հաստատող փաստաթղթեր և պահանջել են թույլատրել մուտք գործել և դիտարկել մրցույթի գրավոր փուլը: Անցագրային կետից կապ են հաստատել Հասմիկ Կիրակոսյանի հետ, այնուհետև՝ հայտնել, որ կարող է բարձրանալ միայն մեկ դիտորդ, բայց ոչ՝ Տիգրան Եգորյանը: Հետագայում մի քանի անգամ ևս հնչել է, որ կա որոշում, ըստ որի՝ մրցույթը կարող է դիտարկել ԻԵՄ-ի մեկ դիտորդ, բայց ոչ՝ Տիգրան Եգորյանը: Երբ Տիգրան Եգորյանը և Սերգեյ Գրիգորյանը պահանջել են, որ հանձնաժողովի որևէ պաշտոնյա, ցանկալի է՝ նախագահը, հաստատի այդ որոշումը, նրանց հետ հեռախոսով կապվել է Հասմիկ Կիրակոսյանը և կրկին հայտնել, որ հանձնաժողովը որոշում է կայացրել, որի համաձայն՝ քննությանը կարող է մասնակցել միայն մեկ դիտորդ, սակայն ոչ՝ Տիգրան Եգորյանը: Հայտնել է նաև, որ այդ որոշումը գտնվում է քննչական կոմիտեում, ինչի պատճառով չեն կարող ներկայացնել: Այնուհետև նույն բանը կրկնել է անցագրային կետ մոտեցած «ծառայության պետի օգնական» ներկայացող Ներսես Վարդանյանը (այդպես էլ հայտնի չդարձավ, թե ինչ ծառայություն նկատի ունի պարոն Վարդանյանը)՝ ասելով, որ փոխանցում է անձամբ հանձնաժողովի նախագահի պատասխանը՝ հաստատելով Հասմիկ Կիրակոսյանի փոխանցած նույն տեղեկությունը և հայտնելով, որ թույլատրվում է միայն մեկ դիտորդի մասնակցություն, բայց ոչ՝ Տիգրան Եգորյանին: Այս ամենից հետո մրցույթը դիտարկելու հնարավորություն տվել են միայն Սերգեյ Գրիգորյանին:

3.3.3. Տիգրան Եգորյանը տեղում դիմում է գրել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, որակավորման հանձնաժողովի նախագահ Արամ Թամազյանին՝ խնդրելով տրամադրել հանձնաժողովի վերոհիշյալ որոշումը, իսկ դրա բացակայության դեպքում՝ թույլատրել իր մուտքը և քննության դիտարկումը: Հունվարի 29-ին ԻԵՄ-ն ստացել է քննչական կոմիտեի հունվարի 22-ով մակագրված որոշումը, որը բազմաթիվ հարցեր է առաջացնում: Ուշագրավ է հատկապես այն, որ որոշման մեջ Տիգրան Եգորյանի անունը բացակայում է. դրա փոխարեն տրված է հետևյալ ձևակերպումը. «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության մեկ այլ ներկայացուցիչ կարող է ներկա գտնվել 2016 թ. հունվարի 26-ին անցկացվող քննությանը»: Փաստորեն ՀՀ քննչական կոմիտեն որոշել է գրավոր որոշման մեջ չարձանագրել իր ցուցաբերած խտրական մոտեցումը Տիգրան Եգորյանի նկատմամբ, սակայն այդպես էլ հարմար ձևակերպում չի գտել, քանի որ «մեկ այլ» արտահայտության կիրառումը արդեն իսկ ցույց է տալիս, որ մինչ այդ խոսք պիտի եղած լիներ մեկ անձի մասին, որը չի կարող ներկա գտնվել մրցույթին, իսկ եթե խոսք չի եղել այդ անձի մասին, ուրեմն

ինչու՞ այդ «մեկ այլ ներկայացուցիչը» չէր կարող լինել Տիգրան Եգորյանը: Բացի սրանից, եթե որոշման ամսաթիվը հունվարի 22-ն է, ինչու՞ են ԻԵՄ-ին միայն հունվարի 25-ին հայտնել դիտորդության իրականացման հնարավորության մասին, և ինչու՞ թե՛ այդ օրը, թե՛ մրցույթի օրը հկ-ի «մեկ այլ ներկայացուցիչ» դիտորդություն իրականացնելու հնարավորությունից առաջ բացառել են Տ. Եգորյանի դիտորդ լինելը: Հետաքրքիր է նաև այն, որ հունվարի 22-ով ստորագրված որոշումը փոստային բաժանմունք է մուտագրվել միայն հունվարի 26-ին, այսինքն հենց մրցույթի օրը:

- 3.3.4. Նշենք նաև, որ իր որոշմամբ քննչական կոմիտեն խախտել է թե՛ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը, որով արգելվում է խտրականությունը, թե՛ «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, ըստ որի՝ «վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք, եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձեռով, ապա միանման դեպքերում հետագայում եւս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձեռով»: Այս խախտումը բացատրվում է նրանով, որ «ԻԵՄ» իհկ-ն՝ ի դեմս Տիգրան Եգորյանի, դիտարկել էր 2015 թ. հունիսի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի՝ ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով կազմակերպված քննությունը և ըստ երևույթին հանձնաժողովի անդամները այքան էլ գոհ չեն մնացել կամ այնքան էլ հարմարավետ չեն զգացել իրենց:

3.4. ՀՀ քննչական կոմիտեի գործողությունների բողոքարկում

- 3.4.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քննչական կոմիտեն խախտել է ԻԵՄ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ վերջինս 2015թ. օգոստոսի 24-ին դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով ոչ իրավաչափ ճանաչել քննչական կոմիտեի գործողությունները և պարտավորեցնել տրամադրել հայցվող տեղեկությունը: 13.10.2015թ. հայցադիմումն ընդունվել է Վարչական դատարանի վարույթ: Հարուցվել է թիվ ՎԴ/4169/05/15 վարչական գործը:
- 3.4.2. ԻԵՄ-ը պատրաստվում է հայց ներկայացնել նաև 2016թ. հունվարի 26-ին անցկացված մրցույթի ժամանակ ՀԿ-ի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանի նկատմամբ ցուցաբերված խտրական վերաբերմունքի հիմքով:

3.5. Առաջարկություններ ՀՀ Քննչական կոմիտեի մասին օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

- 3.5.1. Մրցույթների վերաբերյալ հայտարարությունների հրապարակում ՀՀ Քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջում,
- 3.5.2. Մրցութային հանձնաժողովի ձևավորման, անդամների առաջադրման, ինչպես նաև կազմի պարբերական թարմացման վերաբերյալ ավելի ճկուն և մանրամասն կարգավորումների նախատեսում, որոնք կերաշխավորեն նաև այդ

- հանձնաժողովի անկախությունը և դրա կազմում քաղաքացիական հասարակության ներգրավում,
- 3.5.3. Մրցույթների ընթացքում նաև անձնական հատկանիշների ստուգման չափորոշիչներ և կարգ՝ այդ ստուգումն իրական, բազմակողմանի և արդյունավետ դարձնելու նպատակով,
- 3.5.4. Մրցույթի ընթացքի՝ թե հանձնաժողովի և թե հավակնորդի կողմից արձանագրման և/կամ ձայնագրառման հնարավորություն, որը պայմանավորված է նաև արդյունքների բողոքարկման իրավունքի ապահովմամբ,
- 3.5.5. Օրենքով դիտորդների և ՋԼՄ-ների գործունեության համար իրական երաշխիքների սահմանում, որպեսզի սահմանափակվի վարչական մարմնի հայեցողությունն ու կամայականությունը հանրային այսպիսի կարևորության իրադարձության կապակցությամբ հանրային հսկողության սահմանափակման հարցում,
- 3.5.6. Մրցութային բոլոր փաստաթղթերի, այդ թվում՝ այն անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերի, որոնք մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել, հրապարակայնության հստակ ամրագրում, ինչը կնպաստի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների ապահովմանը. Ավելին՝ այդ փաստաթղթերը Քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջում հրապարակելու պարտականություն,
- 3.5.7. Սահմանել դիտորդների և ՋԼՄ-ների համար մրցույթների դիտարկման ընթացքում ձայնագրառում, լուսանկարահանում և/կամ տեսանկարահանում իրականացնելու իրավունքը՝ հնարավորինս մեծ հրապարակայնություն ապահովելու նպատակով:

4. *Ընդհանուր եզրահանգում մրցութային հանձնաժողովների կազմի և ձևավորման, ինչպես նաև մրցույթների հրապարակայնությունը չապահովելու և նրանց նկատմամբ հանրային հսկողությանը խոչընդոտելու վերաբերյալ.*

Առհասարակ քննարկելով մրցութային հանձնաժողովների կազմավորման, դրանց անկախության, արդյունավետ գործունեության և հանրային իշխանության մարմինների արդարության և մրցակցային պայմաններում ձևավորման և այդ գործընթացների նկատմամբ հանրային արդյունավետ վերահսկողության հարցերը, հաշվի առնելով «Իրավունքի Եվրոպա Միավորում» ԻՀԿ-ի փորձը գրեթե բոլոր պետական մարմինների ձևավորման նպատակով անցկացվող մրցույթների դիտարկման շրջանակներում, ինչպես նաև համապետական ընտրությունների շարունակական և խորքային դիտարկման արդյունքում արձանագրված համակարգային խախտումները, որոնք խոսում են ժողովրդի կողմից կամքի արտահայտման և իշխանության ձևավորման ձախողման մասին՝ այնրաժեշտ ենք համարում արձանագրել, որ այդ գործընթացներն այս փուլում դեռևս չափազանց փակ են, ոչ հրապարակային և ոչ թափանցիկ հանրային վերահսկողության առումով, իսկ հաշվի առնելով այն, որ այդ իրողությունը վերաբերում է նաև այն մարմիններին, որոնք կոչված են ապահովելու թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ակնհայտ է դառնում, որ այս փուլում հանձնաժողովների ձևավորման հարցում նույնիսկ կայացած ժողովրդավարական պետությունների փորձի կիրառումը ի գործու չէ գոյություն ունեցող համակարգային

խնդիրները լուծելու՝ մեծ հաշվով անկախ այն հանգամանքից, թե որ մարմինը կիրականացնի այդ հանձնաժողովների ընտրությունը: Ուստի միակ իրական ազդեցության և համակարգային փոփոխության արդյունավետ միջոցը մնում է այդ գործընթացի հնարավորինս մեծ թափանցիկությունը և հրապարակայնությունը, ինչի հետևանքով անկախ հանձնաժողովների կազմից՝ դրանք ստիպված կլինեն հանրային գրեթե բացարձակ վերահսկողության ճնշման տակ գործել արդար: Այս միջոցի տևական կիրառման միջոցով միայն հանրավոր կլինի ձևավորել ժողովրդավարական հասարակության և պետության համար կենսական կարևորության ավանդույթները: Բացի նշվածից, ցանկալի է նաև այդ հանձնաժողովներում, որպես լրացուցիչ երաշխիք, նախատեսել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման գործուն մեխանիզմ:

Մրցույթների թափանցիկության և նրանց նկատմամբ հանրային հսկողության ապահովումը հավելյալ երաշխիք կլինի իսկապես որակյալ մասնագետների ընտրության և նշանակման համար, ինչի խնդիրը ներկայումս առկա է: Մասնավորապես, ԻԵՄ-ի իրավաբաններն իրենց կողմից վարվող գործերի շրջանակներում առնչվել են քննիչների հետ, որոնք չեն տիրապետել քրեադատավարական տարրական գիտելիքների և անհրաժեշտ մասնագիտական հմտությունների: Օրինակ՝ քննիչներից մեկը քրեական գործերից մեկի քննության ընթացքում մեղադրյալի և վկայի առերեսման ժամանակ մեղադրյալի այն հարցին, թե արդյոք ինքը կարող է հրաժարվել առերեսումից, պատասխանել է. «Այո, իհարկե, դա ձեր իրավունքն է»: Առերեսման ժամանակ նա նաև նշել է, որ վկան իրավունք ունի չպատասխանելու առերեսվողի հարցերին, սակայն իր հարցերին իրավունք չունի չպատասխանելու: Մեկ այլ քննիչ համակարգիչների գողությանն առնչվող քրեական գործի շրջանակներում հրավիրված դատական նիստի ժամանակ նշել է, որ տեղյակ չէ, որ հնարավոր է համակարգիչների MAC և IP հասցեների միջոցով հասկանալ, թե որտեղից է համակարգիչը միացված համացանցին: